



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՖԻ ԵՒ ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ..... Ա. Ա.
 ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ. ՅՈՒՈՒԹԻՒՆԸ ՀԻՄՆԱՆ..... Ռ. ՌՕՊԵՆՍՈՆ
 ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ. ԽԱԼԱՐՄԱՆԸ (ԳՅԱՐԻ ԶԼԱՄՆԱՐԻՆ) ԹԱՐԳՄ.....
 ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. ԼԻՎԻՆԿՈՒՆ ԿԱՄ ԱՔԵՐԵԿԵԻ ՍԵՃ ԶԱՄԲԱՐԳՆ.....
 ՎԷՊ. ՄԱՍԿԻՆԻ ՍԵՂԷՐ (ԲՕԼ ԱԼՊԱՆ) ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.....
 ՔԱՂՈՒԱՄ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. ԱՐՄԱՆԻ, ՆԵՐԷՆ, ԱԶԳԱՅԻՆ.....
 ՍԻՄՈՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԷ ՍԵ ՄՈՆԻԷՐԷՆ) ԹԱՐԳՄ..... Մ. ՉՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱՆՆԵՐՈՒ — տարեկան..... ԿԷՍ ՈՍԿԻ ՕՍՄԱՆ.
 » » վեցամսեայ..... ԳԱՐ » »
 ՄԷԿ ԹԵՐԹԻՆ ԳԻՆՆԱ Է 60 ԿԱՐԱՅ
 ՕՏԱՐ ԶԱՂԱՔԱԳ ԿԱՄԱՐ տարեկան..... 12 ՖՐԱՆԿ
 » » վեցամսեայ..... 6 »
 ԹՊԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԾԱԽՔ տարեկան..... ԳԱՆ. ԿԱՐԾ. 15
 վեցամսեայ 7 1/2

Մասիսի Խմբագրութեան ռուղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ռուղեւ առ

Խմբագրութիւն Արեւիք և Մասիս Լրագրաց
Ղալաթիս, Ներսիսեան Խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 28 Սեպտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110
3 » » » (վճուկնին)	109 15/16
3 » Բարիդի » (պանքայի)	22 90
3 » » » (վճուկնին)	22 95

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Գոնսոլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ (Գ. Կ.) դէպքը	8 17
Պորսային գոցուելէն վերջը » »	8 17
Եւսթր Բերայի մէջ » »	—
Աւաւտուին բացուեցաւ » »	8 18
Բարձրագոյն դին » »	8 18
Նուաղագոյն » »	8 17 1/2
Կէս օրին » »	8 17 1/2
Իւնիֆիէ Եգիպտական »	66 30
Երէկ Երիկուն գոցուեցաւ »	66 35
Բերայի մէջ »	—
Այս առտու բացուեցաւ »	66 35
Կէս օրին »	66 35
Հէվալէսիզ »	20
Բէքօր գոնսոլիտէի »	—
» Իւնիֆիէի »	—
Փոխառութիւն 1863 (Գ. Կ.)Ֆր. ...	63
» 1865 » »	52
» 1869 » »	46
» 1873 » »	41 50
Պոն տիւ ԹրէզօրԱնգլ. Լ.ր.	18 50
Բուսէլիի երկաթուղի Ֆր. ...	41 875
Օպիկասիօն տը Բրիտիթէ »	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի »	78

ԲԱԺՆԵՏՈՄՔ

Սօսիթէ Ժէնէրալ Անգլ. Լ.ր.	3 28
Բրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) ... Օսմ. Լ.ր.	6 18
Պանք տը Գոնս. »	5 30
Սօս. Շանթ է վալէօր Օսմ. Լ.ր.	3 30
Թրամաւէ.յ. »	290

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի զբշ. ...	100
20 Ֆրանկոն »	87 30
Անգլիական ոսկի »	110 5
Բօլ Իմբէրիալ »	90 7
Քրիմից »	51 20
Ռուսկի Թղթադրամ »	8 92
» արծաթ »	89 32
Ֆիօրին »	9 5
Մէճ. արծ. (տարբ.) »	108 3
Վեցնոց »	103 10

Հինգնոց	» ... 103 20
Մէթալիք	» ... 98
Պրիմա »	» ... 800
Թղթադրամ »	» ... 3000

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 9 Հոկտեմբեր ժամ 3 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ գոցուեցաւ	401 1/3
Օսմ. բացուեցաւ	7 11/16
» » գոցուեցաւ	7 3/4
Օսմ. փոխառութիւն 1865	10 1/2
» » 1869	9
» » 1871	68
» » 1872	17 1/2
» » 1873	8 1/8
Փոխառութիւն 1877	80

Պանք Օթօման 12 3/8	
Ռուսական փոխառ. 73 (Գ. Կ.) 94 3/4	
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) 60 3/4	
» առանձին (Բրիտիթէ) 84 3/4	
Տայրա Սանիէ 58 3/4	
Տօմանիալ (փոխառ. Բօշիլտ) 82 1/2	
Հոնգարական պորտաթուղթ 1877 102 1/4	
Փոխառութիւն Բարիդի վրայ	

Վիէննա, 9 Հոկտեմբեր ժամ 4 Երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	121 95
Օսմանեան երկաթուղի 20	
Բարիդ, 9 Հոկտ. ժամ 3 վայր. 15 Երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0բաց 108 92 1/2	
» » 3 0/0բաց 78 17 1/2	
Օսմանեան քոնսոլիտէ բանուեցաւ 7 75	
» » գոցու. (Գ. Կ.) 7 75	
» » 1865 —	
» » 1869 46	
» » 1873 41	

Օսմանեան երկաթուղի 41 62 1/2	
» Բէժիի Բաժնեթուղթ 515	
Պանք Օթօման 568 75	
Գրէտի Լիօնէ 541 25	
» Ֆոնիէ 1308 75	
Բաժնեւորման Լիօնի (Գոնս. Կոր.) 1230	
Սուէզի ջրանցք 1865	
Ռուսական 5 0/0 1877ի 98 3/4	
Իտալական Ռանթ 96 40	
Եգիպտական միացեալ գոց. 306 25	
Սպանիական (արտաքին) 60 1/2	
Բրիտիթէ Թիւրք 368 75	
5 0/0 Հէլլենական 356 25	
Չէք Լոնտրայի վրայ 25 23	

ԲԱՐԻՉ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Հոկտեմբեր 9 ժ. 10, վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0 108 87 1/2	
Օսմանեան » 7 77 1/2	
Եգիպտական միացեալ 306 25	

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 ԴՊՏԱՐԻ

1884 ՍԵՊՏԵՄԲԵՐ 29

ԹԻԻ 3737

ՐԱՖՖԻ

ԵՒ

ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻԻՆԸ

Դ.

Ռուսիոյ Հայոց մէջ գրական անձինք միշտ կանգնած են բարձր պատուանդանի վրայ, և ժողովուրդը կ'արտասանէ նոցա անուններն ակնածութեամբ և համակրանօք: Ռուս ժողովուրդը մեծապէս նպաստած է այս գրացմանց և գաղափարաց զարգացմանն ի Հայս: Հրապարակագոս, վիպասան, պատմաբան, գրականութեան ամէն ճիւղերուն պատկանող անձնաւորութիւնք վայելած են ամէն ատեն ռուս ազգին սէրը, և իրենց ազդեցութիւնը միշտ մեծ եղած է իրենց ազգին վրայ: Ռուս ազգը մին է ի նոցանէ, որք ինչքան ալ թերութեանց ենթակայ լինին, բայց և այնպէս հայրենեաց սէրը իրենց աւաքինութեանց գլխաւորն է: Հայրենասէր ժողովուրդ մը պէտք է նաեւ լինի գրասէր: Ազգային ոգւոյ զարթոնում և ազգային գըրականութեան բարգաւաճում ժամանակակից են միմեանց:

Մի և նոյն երեւոյթը ակներեւ կը տեսնուի ի Կովկաս, և այսօր ազգային մատենադիրն կը գտնուի անդ այնպիսի գրութեան մէջ որ անձանօթ էր Նալբանդեանցներու և Նազարեանցներու: Պ. Բաֆֆի Յոբելեանին առթիւ ի հանդէս եկած բուռն համակրանաց արտայայտութիւնը չօգտինի սպառնոյցն եղաւ Ռուսիոյ Հայոց մատենագրական սիրահարութեան:

Գրական Յոբելեան. զիւտ մ'է Ռուսիոյ Հայոց կողմանէ, և այդ բառի նշանակութիւնը տակաւին անձանօթ է մեզ: Ռ. ի մէջ օր մը մտածեց թէ՛ որ գրագէտն առ մեզ բողբոսած է իւր աշխատանոց քսան և հինգ տարուան շրջան մը: Թերեւս յաջորդ տարւոյ մէջ տօնենք կրթական Յոբելեան մը, բազմաշխատ և բազմարդիւն ծերունոյ մը, Պ. Քրիստոստուր Ղազարոսեանի մեծ վաստակոյ սկզբնաւորութեան քսան և հինգերորդ ամանորը: Բայց գրական Յոբելեան մը ծափահարելու նշանը տակաւին չենք տեսներ:

Խանդն ընդհանուր է. ամէնափոքր գիւղն միջում կ'ընէ մեծ համալսարանին հետ. ամէն որ բորբոքեալ է մի և նոյն ոգւով, և յամենուստ կը տեղան առ Պ. Բաֆֆի ապացոյց այդ սրտաբուլիս սիրոյն: Այդ ապացոյց յայտ յանդիման ցոյց կուտան թէ ինչպէս բանաստեղծ մը կարող եղած է ներգործել իւր ազգի վրայ:

Արդէն մեր նախորդ յօդուածոց մէջ խօսեցանք ի մասին այն ներդաշնակութեան որ գոյացած է ժողովրդային գրացմանց և հեղինակներու գործոց միջեւ, և եթէ ամէն կողմանէ առ Պ. Բաֆֆի առաքեալ յիշատակներն մեր աչաց առաջ ունենանք, կը տեսնենք թէ ինչպէս կապուած են միմեանց հետ Բաֆֆի և Հայ ժողովուրդն:

Բաֆֆիի համար Ռուսիոյ ամէն կողմերէն գրաստական նուէրներ զրկուեցան ի Տփլիս: Նրխտասարդներու մամուլսմբ մը կեդրոն էր այդ հաւաքմանց: Մշակ սիրով կը հիւրընկալէր առաքուած նուէրներն:

Մատենագրութեան զարգացման փափաքողը անտարակոյս շատ գոհ կը լինին երբ հեղինակի մը նիւթական վիճակի բար-

ւորման լուրն առնեն : Գրադէտի մը համար միայն տաղանդ ունենալ չբաւեր, այլ լաւ քսակ մ'ալ անհրաժեշտ է : Հեղինակներն ո՛րքան ալ կաշկանդուին օրինաց շրջանակին մէջ, բայց և այնպէս այդ կաշկանդումն աշխարհ ծանր չէ, որքան ստիպեալ լինիլ նիւթական անձկութեան պատճառաւ լըռել : Պ. Բաֆֆիի դատած դրամական քաջալերութիւնը չենք ըսեր թէ այնքան մեծ է, որ այսուհետեւ զինքն ազատ պիտի կացուցանէ բոլորովին ո՛ր և է մտածութենէ, բայց գումարն ո՛րքան ալ լինի, զի մեզ քանակն անծանօթ է, դիտելու կէտն այն է թէ՛ Ռուսիոյ հայ ժողովուրդն սկսած է վերահասու լինիլ այն ճանարտութեան թէ՛ ազգ. մը որ լաւ մտոնադրութիւն մ'ունենալ կը փափաքի, պարտաւոր է նաեւ լաւ վճարումներ ընել : Ռուսիոյ Հայք գեո. նոր կը քայլափոխեն յառաջադրմութեան այս շաւղին մէջ և կը մաղթենք կատարեալ յաջողութիւն :

Սակայն դրամական նուէրներն երկրորդական կրնան համարուիլ համեմատութեամբ ուրիշ կարգի նուէրներու : Հեղինակի մը սրտին շատ աւելի քաղցր է իրեն սիրահար սրտի մը արտայայտութիւններն քան ո՛ր և է նիւթական փոխարինութիւն : Խոնջ դրամ կարող էր այնքան յուզել Միւսէի մը հոգին քան տեսնել երկասարդ մը որ յուշիկ յուշիկ իւր ետեւէն կ'երթար և իւր բերնէն ձգած գլանիկի մը մնացորդն վեր առնելով իբր մասունք կը պահպանէր : Խնդրեցի Պ. Բաֆֆիէն որ հաճի ինձ ցոյց տալ մի քանիներն այն յիշատակներէն զոր իւր ընթերցողք ընծայած են հեղինակին : Գծապղտաբար ժամանակ անցաւ և ամէնն կարող չեմ յիշել, և օրինակածներս այժմ հազիւ թէ կարող եմ կարդալ, զի գրեթէ ջնջուած են :

Մոսկուայի Հայ հասարակութիւնը որ միշտ այնքան յօժարակամութեամբ մասնակցած է մեր զարգացման ամէն ձեռնարկներու, անտարակոյս պէտք էր գեղեցիկ կերպով ներկայանար գրական այդ տօնախմբութեան :

Թաւապատ գորգի վրայ արծաթէ թանաքաման մը և ուղիւզ մը Մոսկուայի Հայոց զգացմանց ապացոյցն են : Թանաքամանը (ըստ մեզ կաղամար) նուրբ չինուած մ'է ընտիր ճաշակով, և զարդարեալ ոսկի փառաւոր

գրչով մը : Բաւական է ըսել թէ այդ գործը Ռուսաց արքայական ոսկերիչ Պ. Խլէպնիկովի մատանց ամենէն գեղեցիկ վաստակոյց մին է :

Մ Ո Ս Կ Վ Ա Յ Ի

ՀԱՅՈՅ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵՆԻՅ

1859-ԲԱՅՅԻ-1884

Ժողովուրդի մը շնորհակալութիւններն երկու բառով բացատրել հնարաւոր է . այդ երկու բառերը ցոյց կուտան թէ հայ հասարակութիւնը և Բաֆֆի միմեանց հետ կապուած են շատ սերտ կապերով :

Սակայն Մոսկուայի հասարակութիւնը չը բաւականանար թուի թէ լակոնական ոճով, այլ կուգայ վայրկեան մը որ իրենց սիրտը կարօտ է աւելի պերճախօս արտայայտութեանց, և ահա իրենց խանդավառ հոգւոյ բարեմաղթութիւններն գեղեցիկ ուղերձներով ի յայտ կուգան : Շատ սիրուն գրութիւն մը պահպանուած արծաթապատ ըսքանչելի թղթապանակի մը մէջ, կը յայտնէ թէ Բաֆֆի ինչե՛ր ըրած է Հայոց համար :

Խաբքով կարող չէր ետ մնալ Մոսկուայից : Համալսարանական ուսանողք, որք մինչեւ այն ատեն իրենք զիրենք բաւական սէգ կը կարծէին, կամ անտարբեր հեղինակի մը համար գորովալիլ զգացումներ արտայայտելու, այդ համալսարանականք իրենց կարգին յաղթուած են Պ. Բաֆֆիի գրչէն և մի յոյժ գեղեցիկ թանաքաման զրկելով իրենց յիշատակ առ Պ. Բաֆֆի, Խաբքովի համալսարանի հայ ուսանողութիւնը յայտնած է թէ՛ ի՛նչ որ ալ լինին իրենց աւանդուած ուսումներն, ինք ունի սիրտ մը ազգային սիրով բաբախող :

Իրաւ է որ չափսեցան ազնուամիտ անձինք որք այս ցոյցերն իբր հակա-կառավարական ցոյցեր նկատելով, ըստ այնմ տեղեկագրեր ուղղեցին ուր որ անկ է . Ռուսիոյ մէջ հեղինակներն պարտաւոր են սպասել ամէն տեսակ քաջալերութեանց, ամէն տեսակ խոջնդոտներու :

Երկար պիտի տեւէ մի առ մի թուել այն ամէն յիշատակները որք Ռուսիոյ Հայոց և ի մասնաւորի միջակ դասու ազնիւ զգացմանց արտայայտութիւնք են : Մէկ կողմ կը տեսնես թուրկէնէֆի, Ռուսաց ազգային

մեծ վիպասանի ամբողջ դործերն, գեղեցիկ կանգնույթ, նուիրուած Ներսէսեան սանուց կողմանէ : Պատանի ուսանողը զգածուած Թուրկէնէֆի մեղամաղձիկ նկարագրութիւններէ, չէին կարող թերեւս այլ կերպով հայ վիպասանին արտայայտել իրենց զգացումներն քան այդ նուէրով ցոյց տալ թէ հայ պատանեկութիւնն ալ գիտէ իւր սրտին հետ միացնել իբր մարդ և իբր հայ սուրբ զգացումներ :

Գեղարուեստից ներկայացուցիչք անտարբեր հանդիսատեսներ չեն պաշտօնակցի մը տօնախմբութեան : Պ. Յովհաննիսեան ի Մողդոկէ կը նուիրէ հեղինակին պատկեր մը ուր տխրադէմ կ'ընէ մը զաւակաց ձեռքերէն բռնած կ'ողբայ աներեւոյթ եղած ցան և ցիր քաղաքներու շիրմաց վրայ :

Այդ պատկերին հանդէպ Սահակ Մեսրոպ եւ որք աւելի տխուր կ'ընծայեն այդ աւերակաց անցելոյն և ներկային միջև տարբերութիւնը : Աղբէքէ խմբագիրն է որ այս փախուկ նուէրն ըրած է :

Աւերակաց եւ Սահակ Մեսրոպի մօտ կը տեսնես Պ. Բաֆֆիի պատկերն զոր հեռագրատանց մէջ աշխատող հայ երիտասարդ մը իւր հանգստեան վայրկեաններէ օգուտ քաղեր է պատրաստելու համար :

Սակայն այս Յօրեւեանի ողին շատ պարզ կերպով բացատրած է երիտասարդի մը վրձինն ու գրիչն : Քնար մը իւր մէջ պարունակած հետեւեալ տողերն կը բացատրէ ամէն ինչ .

Իմ կեանքից անցան տարիք քսան ու չորս
Բայց ես մինչ այսօր մնացի վերախօս .
Իսկ այսուհետեւ գիտեմ հայերէն
Մի քանի բառեր կարդալ ու խօսիլ :

Ի՞նչ տեղից գիտեմ, հարցուր ընթերցող,
կամ ինչ հայերէն ո՞վ էր ուսուցող :
Այդ մարդն էր ԲԱՖԲԻՆ իւր անմահ գրչով,
Որ լեզուս բացեց իւր սուրբ գրքերով :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՅՈՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՆՁՄԱՆ

Բրօֆէսէօռ Քիւսմաւել Խօսելու յոռուութեանց վրայ իւր յօրինած երկասիրութեան մէջ՝ որ հրատարակեցաւ այս տարի, շատ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ ինչ ինչ ձայներ հնչելու դժուարութեան կամ անկարելիութեան վրայ :

Նախ, կըսէ, ի նկատ առնունք այն դժուարահնչումները (Գէլալէ) որք առ ի չգոյէ վարժութեան կամ առ յոռի կրթութեան կը ծնանին : Լեզուն և իւր պարագայք կարի յոյժ բարեկազմ ըլլալով հանդերձ, անհատ մը անկարող կրնայ լինիլ արտասանելու անջատ ձայները կամ ամբողջ դաս մը ձայներ, եթէ ի դեռաբոյս տիպ չէ վարժուած : Ոչ մի անհատ չպիտի կրնայ արտասանել բոլոր ժողովրդոց բարբառները : Լէքսիոն մը կրնայ այդ բարբառները ի գիր հանել, վերածել . Պրոքէ մը անոնց բանալին գտնել . սակայն և դարձեալ անհնար է նոցա լիովին արտասանել զայն : Ամէն ժողովուրդ, իւր լեզուին մէջ, ձայներէն զոմանա առած և զայս ի բաց թողած է : Կան ուրեմն աղբայն և մանալեզուս (Գէլալէ) դժուարահնչումնք՝ զորս օգտակար է յոյժ քննել վայրիկ մի :

* *

Սկզբնական ձայներու մասին լեզուաց ճոխութիւնը կարի յոյժ այլազան է : Հընդ-կական լեզուն՝ Սանքրիդ, Պարսիկ, Արաբ և Թուրք բառերը ընդունելով իւր բաղաձայնից թիւը 48 ի հանած է, որոց 39ը Սանքրիդ ձայներէ ծնունդ առած են : Անգլիական լեզուն 20, Յունարէնը 17, Բոլիւղիեան լեզուները շատ շատ 10, և քանի մը Աւստրալիական լեզուներ ալ միմիայն 8 հատ ունին :

Շատ լեզուներ ձայներու ամբողջ դասեր չունին : Վեց ազգեր (Մօհաուքները, Սենեքաները և այլն) և Հիւրոնները չրթնական ձայներ չունին . օրինակ, ա, ք, ֆ, ւ, ու, փ . վասն որոյ չունին քաթա և փաթառերը՝ զորս աշխարհիս գրեթէ բոլոր ազգաց լեզուները ունին, և զորս մեր մանկունք

չատ դիւրութեամբ հնչել քաջ գիտեն : Երբ Մօհառքներուն առաջարկուեցաւ « կամ ք ով բառեր արտասանել, ըսին որ չէին ուզեր ծաղր ու ծանակ լինել բերանները դողելով խօսելու համար : (Թայլըր) :

Հարաւային կղզեաց շատերուն բնիկները կոկորդային ձայներ չունէին : Ընկերութեան կղզեաց բնակիչք Քուք նաւապետին անունը Խա-ի կը հնչէին : Ընդհակառակն Սեմսլան ազգեր առատ են յոյժ կոկորդային ձայներու մասին : Անոնք աւելորդ կոկորդային ձայն մ'ունին որ անծանօթ է մեզ մասամբ, և Զուլիցերիական կոկորդի մը ամենէն հեղձեալ հնչումը չկրնար հաւասարիլ Արաբացւոյն արտասանութեան :

Սանքրիդը՝ որ սկզբնական ձայներու մասին ամենէն բարձր ու ճոխն է, համբ է, օ, ֆ չունի : Այդ վերջին գիրը Ֆիննուական, Լիդուանեան, Մոնկոլեան լեզուաց և ուրիշներու մէջ ալ կը պակսի : « գիրը Զինիրէնի, Մեքսիկերէնի և Բերուերէնի մէջ չգործածուիր : « գիրը այլ և այլ Բոլինէզեան լեզուաց մէջ չկայ և անոր տեղ չչոլ հ կը գործածուի : Երբ Բորդուկայցիք Պրապիլիան գտան, տեսնելով որ տեղացիք ֆ, ւ, ք գիրերը չունէին, զանոնք յորջորջեցին «գէ ք ւ-նէ ֆէ, ւ-նէ, ք-նէ (հաւատք, օրէնք, թագաւոր) :

Զինացիք չեն կրնար ք գիրը հնչել : Քի-լիսթու կ'ըսեն Քրիստոսի, Ժա-մէ-լի-քա կ'ըսեն Ամերիկայի : ք ի տեղ կը գործածեն լ գիրը՝ որ անծանօթ է Զեմտ և քանի մը Ճաբոնեան, Ամերիկեան և Ափրիկեան լեզուաց մէջ : Գերմանացւոց ք կոկորդային ձայնը Ֆրանսացիք և Անգլիացիք անհնար է որ արտասանեն : Գերմանիոյ մէջ ալ Ֆրանսացւոց ռնգական ձայնաւորները և Անգլիացւոց քն և կրկին ք կարելի չէ հնչուին : Ռուսիացին Գերմանացւոյն հ ին տեղ լ կը գործածէ : Ափրիկէի հարաւային ցեղեր այնպիսի տարօրինակ ձայներ ունին իրենց լեզուաց մէջ որ Նւրոպացւոյ մը համար, եթէ ոչ անհնար, կարի գժուար է զանոնք արտասանել :

Ամենէն դժուար ձայներէն մին է ք : Մեր (Եւրոպացւոց) զաւակունք ընդհանրապէս ամենէն ետք կ'ունանին հնչել ք և շ : Կան իսկ ոմանք որք, առ ծուլութեան կամ կանացի պչրասիրութեան, բոլորովին չեն արտասաներ ք գիրը իրենց խօսակցութեանց

և ատենաբանութեանց մէջ : Դոքա կ'ըսեն Պատո փոխանակ Պորոօյի, ինչպէս Տարմը-դատցիները կ'ըսէին Տառքատ, և շատ Պէռլինցիներ՝ Քէէլ կ'ըսեն փոխանակ Քէր-լի, ք ն բառնալով և է ով մը երկարելով :

Դեմսթենէս՝ որու համար կ'ըսեն թէ արտասանութեան ամէն յոռութիւնները ունէր և ուղղեց զանոնք աշխատութեամբ, չէր կրնար վերջապէս ք գիրը հնչել, ըստ Կիկերոնի : Այդպէս ք գիրը հնչելու անկարողութիւնը շինահաւ-Քի-ն կոչուած է այն պատճառաւ որ Զինացիք չեն կրնար արտասանել այդ ձայնը : Ռ. Ռ. ՕՊԵՆՍՈՆ

ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ

Խ Ա Ի Ա Ր Մ Ո Ի Ն Ք

Երկնային երեւութից ամենէն ազդու և ամենէն ժողովրդականը՝ երբ գեղեցիկ օրին մէկը, սլարդ և անամպ երկնքին մէջտեղ՝ ակնախտիկ արեւուն դուռնոր յանկարծ աներեւոյթ վիշապէ մը կրծուելով՝ կամաց կամաց տարածութիւնը կը սկսի կորսնցնել միջնաղ լուսոյ բարակ գիծ մը թողլով և վերջապէս բոլորովին անհետ կ'ըլլայ, ինչպէս՝ կարելի է որ այս խորհրդաւոր շիջանիլը վրանիս տպաւորութիւն չընէ : Եթէ մէկը չգիտնայ թէ այդ տեսիլը առաջ կուգայ լուսնին վայրկեանական կերպով միջանկեալ գիրք մը ստանալէն լուսատու աստղին առջեւ, և թէ անխուսափելի հետեւանքն է մեր Արեւմտեանին կանոնաւոր շարժման, ինչպէս կարելի է չվախել այդ արտաքոյ կարգի գիշերուան երկարաձգելէն, ինչպէս կարելի է չերեւակայել թէ չա՞ր ողւոյ մը գործն է սոյդ, կամ չգարհուրիլ՝ իրր աստուածային բարկութեան արտայայտութեան նշան : Եւ իրօք ամեն ազգէս ժողովրդոց վրայ ամեն ժամանակ ընդհանուր տպաւորութիւնը այդ եղած է . անոնցմէ շատերը կը կարծեն թէ աներեւոյթ վիշապ մը արեւը կը կլլէ : Միեւնոյն կարգէն է լուսնի խաւարման պատճառած աղբեցութիւնը, ըստ որում երկնային շարժմանց առերեւոյթ կանոնաւոր ներդաշնակութեան մէջ խանդարում մը արտայայտել կը թուի :

Սաւարմունքները, ինչպէս նաեւ գիտա-
ւորները, միշտ անխուսափելի աղէտից նշան
համարուած են : Մարդկային սնտախու-
թիւնը, իբր թէ համաշխարհական ստեղծա-
գործութեան միմիայն կէտ նպատակի մենք
ըլլայինք, ամենաոչինչ պատճառէ մը՝ Աս-
տուծոյ մատը կը տեսնէ յամենայնի մեր
վրայ :

Օրինակի համար յիշենք ինչ որ Ֆրանսա-
յի մէջ պատահեցաւ 1864 Օգոստոս 21 ին
արեւու խաւարման գուշակութեան առ-
թիւ : Մէկը՝ ընդհանուր պետութեանց
տակնուկարայութիւն մը կը գուշակէր և Հը-
սովմայ կործանում . միւսը՝ համաշխարհա-
կան ջրհեղեղ մը . երրորդ մը՝ առ հուսով
հողագինտի բորբոքումը . վերջապէս ամե-
նէն պակաս չափադանցութեան տանողները՝
օղոց ապականութիւն մը : Այս ահաւոր
բաներու հաւատքը ա՛յնքան ընդհանրացած
էր որ բժշկաց ըստ մասնաւոր հրամանին՝
բաղմութիւն ահաբեկ մարդկանց ամրափակ
տաքացած և հոտաւէտ նկուղներու մէջ
փակուեցան՝ այդ չար ազդեցութենէ վերծ-
ւաւոր հոգով մնալու համար : Բայց վիպասա-
նը կը սկստէ թէ՛ ահաւոր վայրկեանը կը
մօտենար, ահն ու սաշտախ առհասարակ
վերջին ծայր հասեր էր և գիւղի աւաղե-
րէց մը չկարենալով հասնիլ իւր խոտովան-
որդւոցը որոնք իրենց վերջին ժամը հասած
կը կարծէին, ատիպուեցաւ իրենց ըսելու
քարոյի ժամանակ « այն աստիճան չգիտե-
թալ, որովհետեւ ապաշխարողաց յախուռն
դիմելուն պատճառաւ՝ խաւարումը 15 օր
յետաճողներ էր » : Այդ բարեմիտ խոստո-
վանորդիւնները ո՛րչափ որ անոր տրամադրի
ազդեցութեանը հաւատալու դժուարու-
թիւն չէին ըրած՝ նոյնչափ ալ խաւարման
ետ մնալուն դիւրահաւան գտնուեցան :

Պատմութիւնը յիշատակաց արժանի խել
մը դէպքեր առաջ կը բերէ՝ որոնց վրայ խա-
ւարմունքները ամենամեծ ազդեցութիւն
ունեցած են : Մեծն Ալեքսանդր Արպել-
եան ճակատամարտէն առաջ նմանօրինակ
տեսլեան մը պատճառաւ՝ վախցաւ որ մի
գուցէ իւր բանակը կորակոր յաղթուի : Նի-
կիաս Աթենացի զօրավարին մահուան եւ
իւր բանակին պարտութեան պատճառ Սի-
կիլիոյ մէջ լուսնի խաւարում մ'եղաւ : Գի-
տեմը թէ՛ ինչպէս Քրիստափոր Գոլմպոս,

Ճամադա կղզւոյն մէջ իւր փոքրիկ բանա-
կովը սովու սպառնալեաց ներքեւ մնացած,
միջոցը գտաւ իրեն ուտելիք հայթայթելու
Գարայիպներուն սպառնալով գրկել գիրենք
այնուհետեւ լուսնի լուսէն : Սաւարումը
հազիւ թէ սկսեր էր երբ իրեն դիմեցին :
1804ին Մարտի առաջին օրուան խաւա-
րումն էր այդ զոր շատ աստեղագէտք Եւրո-
պիոյ մէջ դիտած էին և որ երեկոյեան ժա-
մը 6 ին պատահեցաւ Ճամադայի մէջ : Ու-
րիշ նմանօրինակ դէպքեր զանց կ'առնուէր
յիշել, որոնցմով լի է պատմութիւնը և ո-
րոնք ծանօթ են ամենուն :

Սաւարմունք այլ եւս երկուդ չեն ազ-
դեր մէկու մը, յորմէ հետէ ճանչցան թէ բը-
նական եւ անխուսեփ հետեւանք մ'են ե-
րեք մեծ երկնային մարմնոց այսինքն արե-
գական, երկրի և լուսնին իրարմէ կախում
ունեցող շարժմանց, յորմէ հետէ գիտցուե-
ցաւ մանաւանդ որ այդ շարժմունք կանո-
նաւոր են և յարատեւ, և հաշուով կարելի
է գուշակել ապագային մէջ պատահելիք
խաւարմունքները, ինչպէս նաեւ կարելի է
գտնել անցելոյն մէջ տեղի ունեցածները :
Այսպէս յետին դարուն վերջերը, Բէնլիք
անուն աստղաբաշխը, գիտաբաց գրքին
հեղինակը, երեք հազար տարուանէ ի վեր
տեսնուած ամեն խաւարմանց ճիշդ թուա-
կանները կրցաւ հաշուէլ :

Այսօր ամեն մարդ գիտէ թէ լուսինն է որ
երկրի շուրջը դառնալով արեւուն և երկրի
մէջտեղը կը մտնէ և արեւու խաւարում կը
պատճառէ, և է որ լուսնի խաւարում մը երբ
արեւուն նկատմամբ երկրի երեսը կը ծած-
կուի : Այս երկու երեւոյթները բնութեամբ
տարբեր են . արեւու խաւարման ժամանակ
լուսինը մոտաւոր կամ ամբողջաբար կը սքողէ
զարեգակը՝ երկրի մակերեւութին քանի մը
կէտերուն նկատմամբ . խաւարումը այլ և այլ
ձեւով կը ներկայանայ՝ զանի դիտելու հա-
մար գտնուած տեղոյդ գրից բերմունքէն :
Տեղ կայ որ ամբողջական է և մանեկաձեւ,
տեղ կայ որ մասնական է և արեգակէն
ծածկուած մասն առաւել կամ նուազ մե-
ծութեամբ . աւելի հեռուն խաւարման հետք
անգամ չտեսնուիր : Լուսնի խաւարման մէջ
ընդհակառակն՝ մեր արբանեակը կը դադրի
մասամբ կամ ամբողջովին արեգակէն լու-
սաւորուելէ՝ երկրի այդ երկու մարմնոց մէջ

տեղը մտնելով . և այդ լուսէն զրկուելը՝ այդ պահուն լուսնին կողմը դարձած երկրային կիսագնդիս ամեն կէտերէն նշմարելի կըլլայ :

Անմիջապէս կը հասկցուի ասով որ լուսնի խաւարման կանխագուշակութիւնը շատ աւելի նուազ կ'ընտոտ է քան թէ արեւու խաւարման գուշակութիւնը, որովհետեւ առաջնոյն համար բաւական է նշանակել երեւոյթին ընդհանուր պարագայները որոնք ամեն դիտողաց համար մի և նոյն են, մինչդեռ երկրորդին դալով՝ ընդհանուր պարագայները նշանակելը բաւական լինելէ շատ հեռու է՝ բազմաթիւ կերպարանքով տեսնուելուն պատճառաւ, մի և նոյն երեւոյթին մի և նոյն ժամանակ երկրիս այլ և այլ կէտերուն վրայ ցրուած դանդաղան դիտողաց նկատմամբ : Բոլոր հինները որ մեզի չափ ճշդ դութեամբ լուսնին շարժումները չէին կրնար ճանչնալ, արեգական խաւարմունքը ճշդիւ գուշակելու միջոցը չունէին : Միայն լուսնի խաւարումները կը գուշակէին հիմնուելով գրեթէ պարբերաբար կրկնուելուն վրայ մի և նոյն կերպով և իրարմէ մի և նոյն հեռաւորութեամբ, այսինքն 18 տարին 11 օրը միանգամ, այնպէս որ բաւական էր դիտած և արձանագրած ըլլալ հաւասար ժամանակամիջոցի մէջ բոլոր տեղի ունեցածները, ապահովաբար գուշակել կարենալու համար յաջորդին մէջ պատահելիքները :

Հիմա ընդհակառակն մեր ունեցած աւելի ճիշդ տեղեկութեամբը լուսնին և արեւուն շարժմանց՝ կարող ենք հաշուել և գուշակել տարիներով և դարերով առաջ, ո՛չ միայն լուսնի ինչպէս նաեւ արեւու խաւարմանց ընդհանուր պարագայները, այլ նաեւ այդ ամեն մանրամասնութիւնները զոր այս վերջին խաւարմունքները պէտք են ներկայացնել երկրիս այս ինչ կամ այն ինչ կէտէն դիտել ուղած ժամանակին : Կարող ենք նաեւ յետագարձ քննութեամբ մը հասու լինել այդ ամեն պարագայից որ հին ժամանակներ տեղի ունեցած խաւարում մը՝ պէտք է ներկայացուցած ըլլայ այս ինչ կամ այն ինչ տեղ, և քանի մը պատմական դիպուածոց ստույգ և ճիշդ թուականները գտնել որոնք խնդրոյ նիւթ եղած են : Աթոյջաբար արեւու խաւարում մը յիշուի հազուադէպ անցք մ'է

որոշեալ տեղոյ մը համար : (Օրինակի առաջաւ ահաւասիկ 1724 էն ի վեր պատահած չէ այդ Բարիզի համար) : Հերոդոտոս կը պատմէ թէ Լիւդացոց և Մարաց մէջ պատերազմի մը ժամանակ, ամբողջակի առեւու խաւարում մը սարսափահար պատերազմողները խալաւ կասեցուց և վերջ տուաւ պատերազմին : Իսկ արդ պատմիչները կը վարանէին այդ թուականը գտնելու համար 626 էն մինչեւ 583 տարուան մէջ տեղուանքները նախ քան զՔրիստոս . աստղաբաշխական հաշուով կ'ապացուցուի թէ այդ պատերազմը տեղի ունեցած է Քրիստոսէ 585 տարի առաջ՝ Մայիս 28 ին :

Քանի մը խօսքով բացատրենք այս երեւոյթները :

Արեւու խաւարումները միշտ կը պատահին նոր լուսնին ժամանակը և լուսնի խաւարումները՝ լուսնի լրման միջոցին : Այս պարագայն շատոնց ճանչցուցած է ի՞նչ պատճառաւ այդպէս ըլլալը : Նոր լուսնի ծագման ժամանակ՝ լուսինը երկրիս և արեւուն մէջ տեղ անցնելով՝ կրնայ մեր աչքէն ծածկել այդ աստղին փոքր ի շատէ մէկ մասը : Ընդհակառակն լուսնի լրման ժամանակ՝ երկիրս է որ կը գտնուի արեւուն և լուսնին մէջ տեղը, հետեւաբար կրնայ արգելուլ արեգական ճառագայթները այդ յետնոյն վրայ ցրանալէ : Ամենը դիւրաւ այսպէս կը մեկնուի :

Եթէ լուսինը երկրիս շուրջը դառնար մի և նոյն կարգին վրայ, ինչ որ երկիրս արեւուն շուրջը կը յաճի ամեն նոր լուսնի ծագման՝ մեր ստուերին մէջ պիտի խաւարէր, և ամեն նոր լուսնին՝ պիտի խաւարեցնէր զարեւը : Բայց է որ կոնաճեւ ստուերին վերէն կամ վարէն կ'անցնի և մի միայն այդ ստուերին մէջ անցած ժամանակն է որ կըրնայ խաւարիլ :

Շատ դիւրաւ կարելի է ըմբռնել խաւարումները . ենթադրենք արեւը մէկ կողմ և երկիրս լուսնին հետ՝ հանդիպակաց . լուսինը ինչպէս որ տեսանք՝ երկրիս շուրջը կը դառնայ . երբ իւր լրմանը մէջ մեր գնդին ստուերին մէջէն կ'անցնի՝ արեւուն լոյսը ալ չի կրնար ընդունիլ . այն ժամանակն է որ լուսնի խաւարում տեղի կ'ունենայ, ամբողջական կամ մասնակի՝ մասամբ կամ համայնաբար մեր ստուերին մէջ խորասուզե-

լուսն համեմատ : Կոնստանտինոպոլսի ստուգարաններին երկու կողմանէ թերաստուներ մը կը ձգեալի, և սլատնաւը այն է որ արեգակնային լուսոյն մէկ մասը միայն կը թափանցէ այդ մասին մէջ : Երկրորդ թերաստուներ մ'ալ կը ձեւանայ մեր գունտը շրջապատող մթնոլորտին պատճառաւ : Միւս կողմանէ երբ նոր լուսնին ժամանակը մեր արեւմտակը ճիշդ արեւուն առջեւէն կ'անցնի, իւր ըստուները մեր վրայ կ'իջնէ և մեր գունտին վրայ փոքրիկ բոլորակ մը կը գծէ որ զանազան երկիրներուն վրայէն կ'անցնի ըստ թաւալման երկրիս շարժումներին : Այն ամեն երկիրները որոնց վրայէն այդ ստուները կ'անցնի, առ ժամանակ մի իրենց արեւը կը խափանի . այս ալ արեւոյ խառնած է ամբողջական եթէ լուսինը այնչափ մօտ է մեզի որ իւր երեւցած տրամագիծը գերազանցէ քան զարեւուն տրամագիծը, ծանկնդեմ եթէ իւր ծիր շրջանին հեռաւորագոյն կէտին վրայ գտնուի և աւելի փոքրիկ ըլլայ քան զգունտն արեւու . ծանկնդեմ եթէ արեւուն և լուսնին կեդրոնները իրարու չեն համապատասխաներ և եթէ լուսինը մէկ կողմանէ միայն կը խափանէ զարեւը :

Այս է խաւարմանց ընդհանուր դրութիւնը : Քննենք հիմայ երեւոյթին մանրամասնութիւնները և սկսինք լուսնի խառնածնէն :

Թէպէտեւ լուսինը արեգակնային բաղադրամաս չափ փոքրիկ է, բայց մերձաւորութեանը պատճառաւ գրեթէ մի և նոյն անկեան բացուածքի տարածութեամբ ստուեր մը կը յետաձգէ . մինչեւ իսկ այդ երկու աստղապայ հեռաւորութեան փոփոխումներէն առ երեւոյթ ընդարձակութեամբ զիրար կը դերազանցեն, և լուսնին տրամագիծը երբեմն աւելի մեծ երբեմն աւելի փոքրիկ կը տեսնուի քան զարեւունը :

Այդ կրնանք հաստատել որ երկիրս արեւուն հանդիպակաց իր ետին կը ձգէ կոնստանտ ստուեր մը, որուն երկայնութիւնը մեր գնդին տրամագիծին 108 անգամն է կամ թէ 344,000 փարսալս . հոն սրածայր կ'աւարտի : 98,000 փարսալս լուսնէն միջին հեռաւորութեամբ երկրիս շուրջ լուսնին կրկին լայնութենէն քիչ մ'աւելի է : Երբ մեր գիշերային ընկերը այս շուրջին մէջէն կ'անցնի կը խաւարի :

Լուսնի ամբողջական խաւարման սկիզբը, առջի բերան կը տեսնուի իւր լուսոյն թեթեւ կերպով տկարանալը որն որ երթալով աւելի կը թանձրանայ . այդ միջոցին լուսինը կը մոնէ կամ արդէն մտած է թերաստուներին մէջ : Յետոյ եզերքին վրայ փոքրիկ կտրօն մը կը ձեւանայ որն որ գնդին լուսաւոր մասը կը գրաւէ : Չեւը բոլորչի է, որն որ երկրիս գնդաձեւ ըլլալուն առաջին ապացոյցներէն մին է, որովհետեւ միշտ շուրջը զինք պատճառող մարմնոյն ձեւը կ'առնուէ :

Ստուերին գոյնը առջի բերան գորշագոյն սեւ մ'է որ խաւարած մասէն չթողուր որ բան մը կարենայ նշմարիլ . բայց քանի որ ստուերը կը գրաւէ լուսնի գունտը, կարմրորակ գոյն մը երթալով կ'զգենու և դըր խաւոր բիծերուն մանրամասնութիւնները տեսանելի կ'ըլլան : Լուսաւոր մասիկին և ստուերին շիկորակ կեդրոնին մէջ տեղը կապոյտ գորշագոյն գիծ մ'է որ կ'երկնայ :

Երբոր խաւարումը ամբողջական է, չի կորակ կարմրութիւնը աւելի ուժգին կ'ըլլայ և անմիջապէս բոլոր գունտին վրայ կը տարածուի : Լուսինը երկու ժամու չափ կրնայ խաւարած մնալ : Երկրիս շուրջին ամբողջ լայնութիւնը անցնելէն վերջը վերստին կ'երեւայ առջի բերան բարակ լուսաւոր մասիկ մը արտագրելով որ անզգալի կերպով կը լայննայ : Իւր բնիկ շարժումները մեր շուրջը արեւմուտքէն դէպի արեւելք ըլլալով այսինքն աջէն դէպի ձախ, ըսել է թէ իւր ձախ կամ արեւելեան կողմէն է որ նախ և առաջ արեւուն կը վերադառնայ :

Լուսինը գրեթէ երբեք բոլորովին չաներեւութանար ամբողջական խաւարմանց մէջ, և այս բանին պատճառը արեւուն ճառագայթից բեկեւեկման մէջ է, որոնք երկրիս մթնոլորտին թանձրագոյն ստորին խաւերը թափանցելով կը խորտակեն և մինչեւ լուսին կ'երկարաձգեն մեր մարը մոտոյ աւրեւուն վարդակարմիր ծիրանագոյն երանդները : Սակայն և այնպէս երբեմն բոլորովին ալ անտեսանելի եղած է ինչպէս օրինակի համար կը յիշուին 1642 ի, 1761 ի և 1816 ի խաւարումները . անկարելի էր երկրներին մէջ լուսնին տեղը գտնել : Ուրիշ անդամներ տեսանելի ըլլալը, առանց բոլորովին աննշան ըլլալու, չափ անկատար կերպով

եղած է: Երբեմն ալ ընդհատուածն, ինչպէս 1705 ին և 1846 ին, լուսինը այն աստիճան լուսադդեաց եղեր է որ խաւարած ըլլալուն տարակուսեր են: Այս պարագայից մեկնութիւնը կը կայանայ ամբողջ երկրիս չըջապատը գտնուող մթնոլորտին մասնաւորապէս ունեցած վիճակին վրայ՝ խաւարման պահուն արեւուն ելած ու մտած տեղումները իւր մէջը պարփակելով:

Լուսնի խաւարումները մի միայն կախում ունենալով արեւուն և լուսնին փոփոխակի իրարու նկատմամբ երկնքին մէջ դըրաւած դիրքերէն, հետեւաբար դիւրմիւրդունելի է որ այդ երկու աստղներուն չարժմունքին օրինաց գիտակցութիւնը բաւական է ոչ միայն առաջուց հաշուելու թէ ո՞ր թուականին այդ երեւոյթները տեղի պիտի ունենան, այլ դուշակել նաեւ զանազան պարագայները որոնց մէջ պիտի գտնուին այդ պահուն: Այս նպատակին հասնելու համար՝ աստղագիտաց հետեւած ընթացքին մէկ գաղափարը տանք:

Գիտեմք որ « դիւ հանգուցից » կը կոչեն լուսնի չըջանին և ծիր խաւարմանի երկու դիւերուն իրար կտրած կէտը և այս երկուքը հինգ աստիճան բացուածքով անկիւն մը կը կաղմեն: Այս դիւը արեւուն նկատմամբ մի եւ նոյն ուղղութեան դիրքը կ'ստանայ 225 լուսնաչըջանի մէջ (լուսնի ծնանելէն մինչեւ վերջին հիւծանիլն) կամ 6585 օրուան մէջ որ ըսել է 18 տարի և 11 օրուան մէջ: Աւ որովհետեւ խաւարմունք տեղի չեն ունենար, բայց եթէ լրացեալ լուսինը և կամ նոր լուսինը այդ դիւին վրայ հասնին, պէտք է և կը բաւէ նշանակել ամեն խաւարմունքներ որ կը պատահին այդ ժամանակամիջոցի մէջ՝ գիտնալու համար ապագայ խաւարմունքները: Այս դուշակութեան ձեւը երկու հազար տարի առաջ ճանչցուած էր Քաղդէացեացմէ և Սաբո կը կոչէին:

Այդ ժամանակամիջոցը բացարձակապէս թուարանական չէ. կրնայ ծառայել գուշակելու թէ խաւարում մը այս ինչ թուականին տեղի պիտի ունենայ, բայց ոչ թէ ճշգրտութեամբ իմացնելու այդ խաւարման աստիճանն և տեւողութիւնը, որ իրօք կը տարբերի սակաւիկ մի նախորդ խաւարումէն, որուն յար և նման պիտի ըլլար՝ եթէ

ժամանակամիջոցը ճիշդ ըլլար: Կրնայ պատահիլ որ մասնական խաւարում մը ըստ ինքեան չափ տկար՝ 18 տարի 11 օրուանէ ետքը բնաւ տեղի չ'ունենայ, և նաեւ մասնական խաւարում մ'ալ ներկայանայ՝ ճիշդ 18 տարի և 11 օր պայմանաժամէն վերջը յորում տեղի ունեցած չէր: Հետեւաբար այս ժամանակամիջոցի կիրառութիւնը՝ որ հնոց միակ միջոցն էր այդ դուշակութեանց համար, ա՛լ բաւական չէ մեզի համար, հիմա որ աստղագիտական ուսումը անհամեմատ աւելի մեծ ճշգրտութեան մը ձեւնհաս եղած է ապագայ չարք մը խաւարմանց կանխաւ ծանօթութիւն մը ստանալու համար: Ուստի թէեւ անցեալ խաւարմանց մէկ ցուցակը ներկայացնել մեր ընթերցողաց հետաքրքրական ըլլայ և ինչ ինչ յիշատակներ արթնցնէ անոնց թուականը գիտող և յիշող անձանց, բայց աւելի հետաքրքրական և ակործակի համարեցանք ապագայ խաւարմանց ցուցակը տալ այսինքն 1885 էն սկսեալ մինչեւ 1900 դարուն վերջը կամ մինչեւ 1890, և այսու կնքել մեր այս համառօտ տեսութիւնը՝ յետագայ անդրադարձութեամբ:

Մեր լուսաւորեալ Եւրոպայի մէջ, հին երկիւղի հետքեր կը մնան դեռ, և այդ երեւութից զուգադիպութիւնը օգտքանական անախորժ պատահմանց հետ՝ ինչպէս են մրբիներ, ողորմունքներ և սաստիկ փոթորիկներ՝ աստուածային բարկութեան արգասիք կը համարուին տակաւին: Վերջին մասնական խաւարմունքներէ մէկուն ժամանակ որ քիչ մը աւելի զգալի երեւցաւ մեր կլիմայից մէջ այսինքն 1867 մարտ 6ին, օրիորդաց վարժարանի մը վերատեսչուհիք իրենց աշակերտները ողջօրէի կայնեցուցին՝ Բարձրելոյն անէծքը մենէ հեռացնելու համար: Նմանօրինակ բան մը չըսուեցաւ 1870 դեկտեմբեր 22ի պատահած խաւարման առթիւ. իրաւ է որ այն ժամանակ չառաւելի աղգու կերպիւ և ուշի մտօք գրուեալ էր իւրաքանչիւր ոք և այդ խաւարումը գերազանցեալ էր քան զինքն զօրաւոր՝ ուղիղ բանին խաւարմունքով, երկու ուշիւ և բանականութեամբ գերազանցող աղգեր զիրար կը յօջօտէին առանց մէկը կարենալ դիտնալու թէ ի՞նչ պատճառի համար. 250,000 մարդ կոտորեցան և 10 միլիար յօդս ցնդե-

ցան . . . : Ուրիշ ատեն այս միջադրային ստատակցական դործին մասնաւոր զուգադիպութիւն մը կը յատկացնէին « անիծեալ տարւոյն » վերջին խաւարման կամայդ ժամանակներ օդին մէջ երեւցած հիւսիսայգ-

ներուն աղբեցութեան պատշաճեցնելով զայդ, բայց այսօր ամեն մարդ գիտէ որ մարդկային յիմարութենէ զատ ուրիշ պատճառ մը չիկար :

ՔԱՄԻՆԱԼԱՄՄԱՐԻՅՆ

Ահաւասիկ ըստ մեր խոստման կը դնենք հոս հետագայ ցանկը աղագայ խաւարմանց արեւու և լուսնի մինչեւ 1890 :

1885

Տեսանելի

16 Մարտ	Մանեկաձեւ խաւարում	Արեգական	Խաղաղական յովիկանոս
50 »	Մասնական	» Լուսնի	Ճենաստան
9 Ապրիլմբեր	Ամբողջական	» Արեգական	Նոր Զէլանտա
24 »	Մասնական	» Լուսնի	Սիւսիա

1886

5 Մարտ	Մանեկաձեւ	» Արեգական	Մեքսիկոյի ծոց
29 Օգոստոս	Ամբողջական	» »	Արեւմտեան Ափրիկէ

1887

8 Փետրուար	Մասնական	» Լուսնի	Սանտիէ կղզիները
22 »	Մանեկաձեւ	» Արեգական	Հարաւային Ամերիկա
5 Օգոստոս	Մասնական	» Լուսնի	Հայաստան
19 »	Ամբողջական	» Արեգական	Ռուսիա և յԱւստրիա

1888

28 Յունիս	Ամբողջական	» Լուսնի	Ֆրանսա
11 Փետրուար	Մասնական	» Արեգական	Հարաւային Բելեռ
9 Յուլիս	»	» »	Նոր Զէլանտա
25 »	Ամբողջական	» Լուսնի	Միսիսիբի
10 Օգոստոս	Մասնական	» Արեգական	Ասիա

1889

1 Յունուար	Մասնական	» Արեգական	Պէհրինկայի նեղուց
17 »	»	» Լուսնի	Միացեալ-Նահանգք
28 Յունիս	Մանեկաձեւ	» Արեգական	Մատակասգար
12 Յուլիս	Մասնական	» Լուսնի	Հայաստան
22 Դեկտեմբեր	Ամբողջական	» Արեգական	Ափրիկէ Ս. Հեղինէ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԼԻՎԻՆԿՍԹՈՆ

ԿԱՄ ԱՓՐԻԿԵԻ ՄԵԾ ՃԱՄԲՈՐԴՆ

Տալիտ Լիվինկսթոն ծնաւ 1813 մարտ 19ին Սլովէտիոյ Լանաքը կոմսութեան Պլանթիր քաղաքին մէջ: Երբ Տալիտ տասն և ինն տարեկան եղաւ, իւր բնակութիւնն հաստատեց Կլասիօ, ուր կատարեալապէս ուսաւ Լատիներէն և Յունարէն, Բուսաբանութիւն, Երկրաբանութիւն ու Փիլիսոփայութիւն:

Լիվինկսթոն երեւելի հանդիսացաւ Ափրիկէի մէջ ըրած խուզարկութիւններով, որոց արդիւնքն եղած է ծանօթացնել այն երկիրներ, լիճեր, գետի ընթացքներ ու հողեր որք տակաւին անծանօթ էին աշխարհագրութեան ու ցեղաբանութեան: Նախ և առաջ երեւան կը հանէ գետ մը որոյ աղբիւրն կը գտնուէր Կեդրոնական Ափրիկէի մէջ, և զոր կը կոչէ Լիվինկսթոնի կամ Գոնկոյի գետ: Սակայն այն ճամբորդութիւնն երկարատեւ և հետեւաբար ինք խոնջած լինելուն համար, հարկ կը լինի իւրեան սակաւիկ մի հանգիստ առնուլ. ուստի կ'ապաւինի Սէչէի անուանեալ Ափրիկէիցի պետի մը քով, որոյ գիր ու հաշիւ սորվեցունելով, հոսսի ուրեմն քրիստոնեայ կ'առնէ զայն: Տարիէ մ'ալ վերջն Մօքօլօսաց Սէպիթուանէ պետին քով կ'ապաստանի. անտի եւս կը մեկնի քիչ ժամանակ վերջ, և ահագին կենդանեաց դէմ մաքառելով, մինչեւ Զամպէզ կը թափանցէ, ուր կը գտնէ Զօքթսայի մեծ աղահանքն: Յետոյ Զօպէի վերայ նաւարկելով կը հասնի Զամպէզի ակնն, և բաղնաթիւ ու փոքր ասպատակութիւններէ յետոյ Մօքօլօսաց ամենավերջին Լիբօնթօ քաղաքն, ուր մի ամիս մնալէ յետոյ կը մեկնի անտի եւս, ուր մարդով զորս տուած էր Զինթէ պետն, Տալիտի սպասներն տանելու համար: Վեհ ճամբորդն այն ճամբորդութեան մէջ ալ կը տեսնէ լիճ մը Տիլօլօ անուամբ: Լիվինկսթոն Զիւզօաց երկիրն եւս անցնելէ յետոյ, կը մտնէ Քոնկոյի ձորն որոյ երկու զառկայրներն 130 քիլոմէր բարձրութիւն ունին և որոց մէջ կը գտնուի մի նեղ մարգագետին:

Ամառն Ափրիկէի արեւելքն՝ Փորթուկիաց Լօանտա մայրաքաղաքն կը հասնի ուր հինգ ամիս կը կենայ իւր թանչին դարման տանելու համար: Անտի եւս մեկնելով կ'երթայ Անկօլայի երկիրն քննելու, և յետոյ կը վերադառնայ Մօքօլօսաց երկիրն, յորում իւր դարձն տեղի կուտայ մեծ ուրախութեանց, զի այն երկրին ժողովուրդն կը կարծէր թէ անապատին խորն մեռած է Լիվինկսթոն իւր ընկերաց հետ միասին: Այսպէս Տալիտ Լիվինկսթոն Ափրիկէի անապատաց մէջ տասն և վեց տարի աստանդական թափառելէ վերջ, կ'ուղէ երթալ տեսնել վերջին անգամ Անգլիա և իւր ընտանիք: Ուստի Հնդկաց Ովկիանոսին վրայ գտնուող Քիլիմանիէ քաղաքէն կը մեկնի 1856ին, և քիչ օր վերջ Անգլիա կը հասնի, ուր մեծ պատուոյ կ'արժանանայ ի վարձ իւր անխոնջ աշխատութեան: Անդ երկու տարի իւր ընտանեաց քով մնալէ վերջ, իւր աղջակցաց և հայրենակցաց իւր վերջին հրաժեշտն տալով կ'ուղեւորի Սփրիկէ ընտանիքով հանդերձ. կը հասնի Մօզամպիք և վերստին կը նաւարկէ Զամպէզի վրայ Մաուսէթ անուանեալ հանճարեղ մարդու մը հետ: Սոյն երկու դիտուելք ի միասին կ'անցնին Մադարօն, և Լուբանկօ կը հասնին ուր Լիվինկսթոն իւր բնակութիւնն կը հաստատէ առաջին անգամ: Բայց այն քաղաքին մէջ հանգիստ չ'առնուն, այլ միշտ յառաջ կը խաղան Ափրիկէի անսահման անապատաց մէջ: Լիվինկսթոն այս անապատաց մէջ կը ձգէ իւր բարեկամն որ մի այլ ճամբով ուրիշ խուզարկութիւններ կ'ընէ. իսկ ինքն կ'ընկերանայ Քիրք անուանեալ գիտնական մարդու մը հետ: Սոյն երկու հանճարեղ մարդիկ ի միասին կ'երթան Ափրիկէի խորերն, ուր կը գտնեն ընդարձակ և լայնածաւալ երկիրներ զորս կը կոչեն «Փիլիբուր մեծ երկիրն» բաղում փիղ գտնուելուն համար. անդ կը գտնեն նաեւ Քիուուա անուանեալ մեծ լիճն որ լի է ուղեղջիւրներով, կոկորդիլոսներով և տղրուկներով: Յետոյ Շիրին քերելով կը հանդպին Մարափիանց Նիասսա լճին որոյ լայնութեան աստիճանն 90 քիլոմէր է, իսկ երկայնութեան աստիճանն է 326: Յետոյ Մօքօլօսեանց երկիրն անցնելով ինչպէս նաեւ Քամփոյի գետախառնուէքն՝ կը հասնին Սէ-

չէքէ անուանեալ քաղաքն : Յետ այսոցիկ կ'այցելեն Մօսկուայի ջրվէժն և կ'անցնին Նաքանասալօի , Նաքապէլէի և Մէպուսօսամայի յորձանքներն : Տասն և հինգ օր վերջ կը մտնեն Քէպրապալայի ծոցին մէջ և Քոնկոյի նաւահանգիստն կ'առնուն վայրենեաց աճեա մակղկներով : Սոյն միջոցին Ափրիկէի ծովեզերաց վրայ կը նշմարեն Բիօնիէ շուգենաւն որ Անգլիայէն բերած էր Մաքէնպի եպիսկոպոսն և այլ կղերականներ . Լիվինկոթոն մեծ ուրախութիւն կը յայտնէ նոցա գալստեան վրայ :

Մաքէնպի եպիսկոպոսն ընկերանալով Լիվինկոթոնի հետ, միասին կ'երթան անաստտին խորերն այլ գիւտեր ընելու համար , սակայն տակաւին ճանապարհին այն ինչ երրորդ մասն յառաջացած , մահուան հրեշտակն կուգայ Լիվինկոթոնի ձեռքէն խլել եպիսկոպոսն և իւր կինն : Սոյն վերջոյն մարմինն կ'ամբիօրուի Ափրիկէի մէջ մեծ պաօպայի մը հովանոցն ներքեւ 1862ի ապրիլի 27ին : Վեհ ճամբորդն «իորձառու» եպիսկոպոսին և իւր կնոջ մահուան վերայ , Անգլիա կը զրկէ իւր եղբայրն և Քիրք բժիշկն , վախնալով թէ մի դուցէ նոքա եւս բռնուին թանջի տաղակալի և մահաբեր հիւանդութենէն : Սակայն Տալիս չի յուսահատիր , այլ ընդհակառակն կը յառաջանայ դէպի Ափրիկէի խորերն և կը դառնէ Զօմբօ անուանեալ լեռ մը որոյ գագաթն ամպերու մէջ կը կորսուի : Ար հասնի Ռիվի-Ռիվի , ուր կ'ընկերանայ Միւսչիլօն անուանեալ մարդու մը հետ և որոյ յետոյ Քիրք մականունն կուտայ , իւր մնաց միշտ ներկայ ընելու համար իւր Քիրք վաղեմի բարեկամին յիշատակը : Իւր այս նոր բարեկամին հետ Պէմպօի լիճն այցելելէ յետէ կուգայ Զանգիպար ուր երկու ամիս կենալէ յետէ , կը մեկնի ևս անտի մի քարավանով , յորում կը գտնուին 15 Ասիացիք , 80 բնիկ Քոմօք , 15 Ափրիկէցիք , 6 ուղտ , 4 դովէշ , 2 ջորի , 4 էշ , և երկրորդ անգամ եւս կ'այցելէ Մարալիանց Նիսասան որոյ ամուսնին Մանիէմաս անուամբ ցեղ մը կը բնակի որ ընդհանրապէս սեւ է : Անտի ևս կը յառաջանայ և երեւան կը հանէ մի քանի ուրիշ լեռներ , բլուրներ և լիճեր որոց տեսարանն սքանչելի է իսկ դիրքն հիացուած կը պատճառէ . Լիվինկոթոն քերելով այս լիճն կը հասնի Լանկաներու երկիրն որոյ

ժողովորդն քիչ տարբերութեամբ սպիտակ ցեղին կը նմանի : Սոյն երկրին մէջ եւս բաւական ժամանակ աստանդական թափառելէ յետոյ երեւան կը հանէ Մօսկօ անուանեալ ընդարձակ լիճն , որոյ արեւելքն և արեւմուտքն ահագին լեռներ բարձրացած են :

Լիվինկոթոն այսքան մեծ գիւտեր ընելէ յետոյ վերջին անգամ կ'ապաւինի Լօանտայի երկիրն ուր սակաւիկ մի հանգիստ առնելէ յետոյ կը մեկնի անտի եւս և վերստին իւր խուղարկութեանց կ'օկտի հակառակ իւր Փիլիպական կաղնութեան : Սոյն մեկնումէն վեց շաբաթ վերջ երեւան կը հանէ լիճ մը որ 277 քիլօմետր երկայնութիւն և 148 քիլօմետր լայնութիւն ունի . սոյն լիճն կը կոչուի Պանկուէլօ :

Սոյն գիւտն եւս կատարելէ վերջ կ'անցնի Օնճիճի , Ոքահա և Մանէէմա երկիրներն և կը հասնի Լուալապա . առկից եւս կը մեկնի և կ'երթայ Մահմեյայ անուանեալ վայրն ուր իւր ընկերք զինքն կը ձգեն ի բաց առեալ երեք հաւատարիմ ընկերներէ որք էին Սուլի , Շուսա , և Կարտնըր :

Լիվինկոթոն այլ եւս անկարող քալելու , հանգիստ կ'առնու այն վերջին վայրն իւր թանջին դարման տանելու համար , բայց մահն վրայ կը հասնի և կը լալիէ այն մարդը՝ որ դրեթէ զաշխարհ համայն իւր ոտից ներքեւ առած և նուաճած էր իւր տաղանդով : Մարմինն Վէնվրայթ գիտունին ձեռօք Զանգիպար կը բերուի , անկից նաեւ Անգլիա : Անգլիացիք երախտադէտ մեծ ճամբորդին մարմինն կ'ամբիօրուին Անգլիոյ Ուէսթմինսթրի աբբայարանին մէջ , վեհ դիւցազանց ոսկերց քով , 1874ի ապրիլի 18ին :

Սոյն ճամբորդն մի քանի մեծ գիտուններէ ընդունած է « Ափրիկէի մեծ ճամբորդն » տիտղոսը :

Վ Ե Պ

ՄԱՏԼԵՆԻ ՄԵՂՔԸ

Ե .

(Շարահանութիւն Տէս Թի- 3736)

Հետեւեալը չը դրած՝ կ'զգամ որ կը ալ-
կարանամ, երբ միաքս կը բերեմ թէ ի՛նչ
տեսակ կեանք պիտի ունենայի երբ այս
բանս պատահած չըլլար . յուսահատութիւն
և ինքզինքիս դէմ վերադարձ յարձակմունք
խիղճս գրեթէ կը կեղեքեն : Այո՛, դեռ
այդ պահուն՝ սիրտս իւր տկարանալովն հան-
դերձ մաքուր էր, այլ ես ընդդէմ մարտն-
չելու զօրութիւնը չունէի, ճշմարիտ է,
բայց փախչելու հաստատուն կամքն ունէի :

Քանի մը ժամ այդ հանգարտ քնով քնա-
նալէ ետեւ, զոր այնուհետեւ ա՛լ չեմ ճանչ-
ցած, երբ աչուքներս բացի, առաւօտեան
արեւուն ճառագայթները վարագոյրներուն
մէջէն սենեակս կը թափանցէին . անորոշ
ձայներ, և այդ զգուշաւոր երթեւեկու-
թիւնը որ տանուտեարք քնացած պահուն
սնեցւոց տալաւ առ տալաւ արթննալը ըզ-
գալի կ'ընեն՝ ակամօյն կը հասնէին, թէեւ
եւ որոշելու բնաւ հոգ չէի տանէր . կը ջա-
նայի երկարել այդ բարերար կէս թմբու-
թիւնը և յետին երազացնոր տեսլեան մը մէջ
ժամաւաճառ ըլլալ . կարծես թէ չէի ուղեր
հաւատալ թէ արեւը լուսաւորած էր, վասն
զի երկար ժամանակէ ի վեր ամեն օր ա՛յն-
քան նորանոր վիշտեր կ'ունենայի որ բը-
նազդմամբ մը կարծես իբր թշնամիէ մը կը
խորշէի անկից : Յանկարծ կառքի մը առա-
զին վրայ թաւալելու և արշաւակի հեռա-
ցող ձիու ամբակի ձայն մը իմ թմբութենէս
զիս սթափեց . անկողնէս ցատկեցի և պա-
տուհանը վազեցի և ճիշդ այն վայրկենին
հասայ որ ամբրիկեան թեթեւ և բաց կառք
մը պարտիզի ճանքուն անկիւնը կը դառ-
նար . հօրեղբայրս ինքնին կը վարէր ձիանքը
և Բիէր սենեկապանը իւր քով նստած էր :
Վաղանցուկ տեսիլքի մը պէս եղաւ ինձ այդ,
և ժամանակ մը անշարժ մնացի, չկարենա-
լով մեկնել այս առաւօտեան երթը . վեր-

ջապէս զանգալը զարկի . — Հօրեղբայրս
դո՛ւրս ելաւ, հարցուցի սենեկապան կնոջ :

— Այո՛, օրիորդ, և այս նամակը թո-
ղուց, և Բիէր քիչ ատենէն պիտի դառնայ
տիրուհւոյդ հրամաններն ընդունելու :

Նշանացի ճանբեցի գինքը և անկողնիս
եղբրքը նստելով նամակը բացի : Շատ մը
դրամատմանակք մէջէն ինկան որոնց վրայ
վերջէն անդրադարձայ : Առաջին բառերէն
սկսեալ շանթահար եղայ . տուն առ տուն,
կրկին և կրկին կը կարգայի առանց իմաստը
լիովին ըմբռնելու, և սակայն հասկցածս
այն էր որ ես կորսուած էի : Աւաթի՛կ այդ
նամակը, զոր կրքով և բարկութեամբ գրե-
ր էր հօրեղբայրս՝ նախորդ օրուան թուակա-
նով .

« Ամեն բան գիտեմ, ամեն բան հասկը-
ցայ վերջապէս : Քիչ առաջ քու տարիա-
ծուիդ թեւոց մէջ զքեզ տեսայ, և եթէ
զձեզ ձեր ամթապարտ վիճակին մէջ չխոր-
տակեցի, այն մտածմամբ էր որ մի՛ գուցէ
Լուիզի մահուան պատճառ ըլլամ : Իւր սի-
րոյն համար է միայն որ կ'ուզեմ խնայել
քու մեղսակցիդ, բայց դո՛ւ զոր կը սիրէի
աղջկանս պէս եւ քու քոյրդ կը մատնես,
զքեզ ա՛լ չեմ ուզեր տեսնել : Խի՛ղճք թէ
անձնական հաճոյք դրոյեցին զքեզ այս եր-
կար ճանբորոյթեան . ճանճրացե՛ր էիլ
տարիածուէդ, կամ թէ աւթաճաճը եղած
էիլ վերջապէս խաբելէ զքեզ սիրող և ա-
մենայն վստահութեամբ քեզի անձնատուր
եղած անձերն : Ա՛հ, աչօքս տեսայ երէկ՝ ո-
րուն ո՛չ երբէք կրնայի հաւատալ եթէ աչ-
խարհ ամեն ոտը ելած ըլլար՝ հաստատելու
համար զայն . . . :

Այս առաւօտուքնէ պիտի մեկնիս Վիլիքեր-
նիէն և իմ նօտարիս իմաց պիտի տաս քաշ-
ուած տեղդ . պատուաւոր կերպիւ՛ն եթէ կա-
րելի է առանց դրամական նեղութեան կա-
րենալ ապրելուդ խնամք պիտի տանի : Բայց
նա՛ միայն, նա միայն տեղեակ պիտի լինի
ի՛նչ վիճակի մէջ գտնուելուդ . Լուիզ և իւր
ամուսինը չգիտնան զայն . զայս կը պահան-
ջեմ քեզէ, Մա՛տլէն, յանուն ամենայնի որ
սուրբ պէտք է ըլլայ քեզի համար, մօրդ
յիշատակին համար, անմեղ քրոջդ սիրոյն
համար, եթէ պատուոյ զգացման յետին
նշոյլ մը կը մնայ քեզ դեռ՝ անկումէդ վեր-
ջը » :

ԼՈՒԻ ՏԸ ԼԻՎՈՒԱ

Եւ յետ դրութեան մէջ կ'աւելցնէր . «Ձբեղ արդարացնելու ու է փորձ մի՛ ըներ , աւելորդ կ'ըլլայ . կանխաւ կ'իմացնեմ քեզ որ նամակներդ չբացուած կրակը պիտի նետուին» :

Ձը դիտեմ ո՛րչափ ժամանակ պակուցեալ մնացի՝ առանց խորհելու և առանց արցունքի :

Իմ թմբուրութեան արթնցայ՝ սենեկապան կնոջ վերջապէս վրայ հասնելովը որ ինձ իմաց կուտար թէ Բիէր իմ հրամանացս կ'ըստատէր :

Երբ զանգակը զարնեմ՝ վեր դայ , ըսի մտքս մտաւ . շտապաւ հագուեցայ և դրիչ մ'առնելով հօրեղբօրս գրեցի այդ դեղեւեկոտ պահուս մտքս եկած խել մը կապակցութիւն չունեցող իմաստները : Այո՛ , տանջուեցայ , մաքառեցայ , սիրեցի և մատնեցի ինքզինքս , կ'ըսէի , կ'ուզէի որ Ղուիզ երջանիկ ըլլայ . իմ երանութիւնս , սէրս , ամբողջ կեանքս իրեն զոհեցի , և յետոյ մէկ տկարութեան սրահուս՝ ամեն բան կորուսի : Բուպէր զիս կը սիրէր , ես մերժեցի զինքը՝ Ղուիզին տալու համար զնա . ամեն օր իրենց երանութեան ականատես եղայ , մահն ի հոգիս և ժպիտն երեսիս՝ իրենց քով ապրեցայ , և եթէ քեզի հետ իրենցմէ հեռու կ'ուզէի փախչիլ՝ ո՛չ թէ խղճմտանքիս այլ վտանգին առջեւէն կ'ուզէի փախչիլ : Ի՛նչպէս եղաւ որ մեկնելու պահուս այդ ճակատագրական դադարէրը սրտէս փախաւ , չեմ կրնար ըսել . . . հոն էիր , իմ առաջին անգամ տկարանալուս վրայ հանդիսացար . . . դուք ըսէք եթէ այս պատիժը համահաւասար չէ յանցանքին : Ղուիզ բան մը չը դիտեր և պէտք է որ դարձեալ չգիտնայ . ինչ և ո՛չ մէկ բառ մը պիտի հասնի զիդովելու նորա կեանքը և ո՛չ ալ ձերը : Մնաս բարեաւ . ներքէ՛ ձեր պարգեւը մերժելուս . շատ ծանր պիտի նստի սրտիս՝ քանի որ ձեր սիրտը զիս կը մերժէ . . . մնաս բարեաւ դու որ զիս առնդ առիր , պաշտպանեցիր և սիրեցիր : Ձեմ կարծեր որ առանց ինձ պիտի կարենաս ծերութեան հասնիլ . այդ մտածութեան առջեւ է որ արխութիւնս կ'ընկճի :

Ոտիցս առջեւ ինկած գրամատմաները ժողովեցի և այս նամակիս մէջ դրի : Յետոյ յիտալիա ճանրորդութեանս ազագուս կազմ և պատրաստ սնտուկներուս մէջէն փոքրիկ

սնտուկ մը ընտրեցի , ուր ճերմակեղէններ դիզեցի և քանի մը ամենապարզ զարդարանք : Գոհարեղէններէս միմիայն ժամացոյցս պահեցի որ մայրենական լըլալով իրաւամբ իմն էր , նսեւ առանձին քսակի մը մէջ փոքրիկ գումար մ'ունէի անձնական զարդ ուցս և ողորմութեանց ստակէն խնայած . ճանրորդութեան սկզբնական ծախուցս դէմ գնելու համար՝ առի զայն , որովհետեւ անմիջապէս կ'ուզէի Բարիզէն մեկնիլ , և կարելի եղածին չափ հեռի եթալ : Քանի մը նամակներ և կարեւորութիւն չունեցող թղթեր սյրեցի , որոց վրայ լաւագոյն օրերուս մէջ զուարթ մտածութիւններ և շատ մը երջանկութեան երազներ դժած էի . յամրաքայլ չըլնա մ'ըրի փոքրիկ սենեկիս մէջ յորում այնքան ժամանակ եղջանիկ ապրեր էի , ամեն մէկ առարկային առջեւ կանգ առնելով ցաւազին և յուզեալ սրտիւ դիտելով ամեն մէկ կարասի . յետոյ կանչեցի Բիէրը : Ղուիզի սենեկին մէջ , որսի զդեստով , սեւ ու ճերմակ կապարով դժուած , Բուպէրի մէկ պատկերին առջեւ կայնեցայ . վայրկեան մը փորձութիւն ունեցայ այդ պատկերը վար առնելու և դանձա հետոս առած փախչելու . բայց ոչ , իրեն և ո՛չ մէկ բանը իմ սեփականութիւնս կրնար ըլլալ . ծանր ծանր դուրս ելայ աչքս այդ պատկերին վրայ սեւեռած . դրան սեմին վրայ արձանացած՝ չէի կրնար ոտքս դուրս դնել . ինձ այնպէս կը թուէր թէ աչուքներով զիս կը կոչէր , և իւր համրացեալ շրթուքները կը բացուէին իմ անունս տալու համար . սրբաշին մէջ նստայ միւսանգամ այդ մի և նոյն բազմոցին վրայ յորում նախորդ օրը նստեր էի , երբ նա իմ ոտիցս առջեւն էր . . . վերջապէս հարկ եղաւ մեկնիլ :

Բարիզ հասնելուս՝ ո՛չ ոք ինձ կը սպասէր : Բիէր կառք մը կանչեց և երբ ինք ալ կը արտորաստուէր կառապանին քով նստելու . — զնա՛ , ըսի իրեն , մեր օթեւանը չի պիտի երթամ :

Ձարմացմամբ նայեցաւ ինձ : — Օրիորդը միթէ ինձ պէտք չունի՞ , ըսաւ , դէպի ո՛ւր երթալ մտադիր է , ըստ այնմ հրամանս տամ :

Վայրկեան մը տատամեցայ . Սէն Բօլ պատասխանեցի դիպուածաբար :

Հրամանս կառապարին հաղորդեց և երբ ձին սկսաւ ընթանալ՝ տեսայ զինքը ան-

չարժ արձանացած՝ պլուցեալ երեսս կը նայէր :

Փողոցը դառնալուն պէս՝ կառքը կեցուցիւ և կառավարին հրամայեցի Օրլէանի կայարանը տանիլ զիս : Հոն քանի մը ժամ հարկ եղաւ սպասել . Պրորաներ գնացող շոգեկառքը երեկոյին կը մեկնէր . վերջապէս դղրեցաւ ու զիս Բարկլէն հեռացուց : Լքեալ և բարձր թողի՝ առժամանակեայ կերպիւ Լա Ռօշ Իվօնի փողոցի տնակը ապաստանելու գաղափարը ունեցեր էի , այդ տնակը զոր Լուիզ հարսանեաց ընծայ ինձ տուած էր , ոչ եթէ զայն որոշակի իմ սեփականութիւնս համարելով , վասն զի դիտմամբ թողեր էի հօրեղբօրս առատաձեռնութենէն ստացած դեհարեղինացս քովը կալուածագնի մուրհակներս , բայց կ'ուզէի նախ և առաջ ի՛նչ որ ըլլայի՝ մեծ հեռաւորութիւն մը դնել իմ և թողուցած անձանցս մէջ : Ուրիշ կողմանէ կը մտածէի որ միտքերունէն չանցնիր զիս հոն մնառել , ենթացողութիւնս իսկ որ ունէ մէկը շարունակէ դարձեալ իմ վրաս մտածել : Միւս կողմանէ հօրեղբօրս յարաբերութիւնը փոքրիկ տնակին պատաւ կնկան հետ այնքան հազուադէպ էին որ ամենայն հաւանականութեամբ բաւական ժամանակ պէտք էր անցնիլ նախ քան իմ այդ կողմերը ի վեր երեւնալուս լուրը իւր ականջին հասնէր : այդ միջոցին կը յօսայի ունէ որոշում տուած ըլլալ և ինձ ասիրուստի միջոցներ հայթայթել :

Կեանքս տակնուվրայ ընող արկածին մէջ շատ աւելի հանդարտ էի , քան ինչ որ երկայն ժամանակէ ի վեր չէի կրցած ըլլալ : Անիրաւ ճակատադրիս դէմ հզարտ սիրտս կը բողբէր . սրտօրոյս անհամբարտ մեծութիւնը՝ ինձ կորով կ'ազդէր : Նիւթական արգելքներու դէմ , ինչպէս որ էին աղքատութիւն և լքեալ վիճակս , մտքառել ինձ հարկ էր . և այդ ինձ աւելի զիւրին կ'երեւար քան այդ օրէ օր աճող ու մեծցող գաղտնի սիրոյ մը դէմ մղած ներքին յուսահատական պատերազմներս : Իմ դժբաղդութեամբս հանդերձ՝ փրկութեանս զգացումը ունէի և բաւական խաղաղ կը ննջէի երբ շոգեկառքը Նանդ կանգ առաւ : Անմիջապէս մի և նոյն երեկոյին Վան երթալու կառաց դրասներակը դիմեցի : Օրուան մէկ մեծ մասը կայարանը անցուցի , ծրարներու

վրայ նստած , առաջին անգամ՝ անպաշտպան լինելուս համար քիչ մը վախ ունենալով սրբտիս մէջ , միանգամայն պաշտօնէից հետաքրքրութեան ենթակայ և բեռնակիրներէն երբեմն երբեմն հրուելով : Կառքը լեցուելուն պէս՝ զատ կիսաբաժնին մէջ առանձին մնացի քարեբաղդաբար , վասն զի ո՛ր է ծիծաղադէմ չնչող ու գործող էակի մը ներկայութիւնը իմ քովս ինձ տոեղի սիրտի ըլլար :

Հագիւ թէ Վան հասայ կառք մը ճարեցի և ճանաչայ ինկայ Լա Ռօշ Իվօն երթալու : Բարակ անձրեւ մը թանձր մառախուղի պէս կը տարածուէր ամբողջ դաշտավայրին վրայ , ծառոց անշարժ սաղարթներէն առաքար յերկիր հոսելով . փռոտ եւ դեղնածագիկ թուփի ձիւղեր՝ խառն ընդ աշնանային թեւոց սարդից , թուփը և դաշտի բոցով առկեալ , և ճախճախուտ ջուրց հայելիք աղօտ կը փայլէին . ի հեռուն շիկոտակ երկուտ խոպան երկրին երեսը . երկինք ցած գորշագոյն թափանցիկ խորութենէն զուրկ էին ամենեւին : Կառավարս 18-20 տարեկան պատանի մը նիհար դէմքով , երկայն և շիտակ մազերով չըջապատած մաշտմբ , և լայնատարած եղբրքով թաղեայ գլխարկին տակ ծածկուած՝ մէկ ձայնի վրայ մաղձոտ երգ մը կը միմաար : Օրը այնպէս շուտով կը տարածամէր որ Լա Ռօշ Իվօն հասած ժամանակնիս արդէն մութ գիշեր էր :

Պատաւ Մարի Աննան շատ դժուարութեամբ մեզի բացաւ դուռը , բայց ալ աւելի դժուարութիւն քաղցինք՝ ո՛վ ըլլալ իրեն հոսկցնելու : Քիչ մը խուլ էր , և թերեւս աւելի երկայն ատեն . դրան սեմին վրայ կայնած բանակցութեան մոտեցող սիրտաւորութիւն հետը՝ եթէ կառքին բեռները իջեցնող սրտանեակը խոհանոցէն բոբբոքեալ ռետին շոճւոյ փայտէ ջահ մը չի բերէր : Զարմացմամբ վայրկեան մը ինձ նայեցաւ , յետոյ ճանչցաւ զիս . իմ հօրեղբօրս հին վարձակալներէն մեկուն այրի կինն էր , որուն իմ խնդրանքս յանձնուած էր փողով տնակին պահպանութիւնը . խեղճ պառաւ չէր գիտեր ինչպէս բացատրել զիս վերստին տեսնելուն զգացած ուրախութիւնը :

Իրեն մեկնեցի հիւանդացած ըլլալ և առողջութիւնս կաղդուրելու համար Պրոր-

դաները գալս, և թէ ոչ զոր կ'ուզէի տեսնել և կը խնդրէի իրմէ իմ գալատեանս լուրը մէկու մը չհաղորդել: Հարցուց ինձ թէ հօրեղբայրս և Լուիզ քիչ ատենէն ետեւէս պիտի հասնէի՞ն: Հասկցուցի իրեն որ ատժամս չէին կրնար գալ և թէ ես ինքս քիչ մը ուժ առնելու չափ ժամանակ միայն դիտաւորութիւն ունէի Լա Ռօշ Խիօն բնակիլ:

Մինչդեռ ինք կը փութար վերի յարկը իմ սենեակս պատրաստելու եւ տարիքէն ճանճարացած քայլերուն ներքեւ կարկատուն տախտակամածին ճարճատելու ծայնը կառնուի, նստայ խոհանոցը խոշոր վառարանին մէկ անկիւնը և պայծառ բոցին առջեւ խոնաւութենէ ընդարմացեալ անդամներս ըսկոյ տարքցնել: Քիչ մը ատեն անցնելէն վերջը Մարի Աննա կրկին երեւցաւ: Սենեակս պատրաստ էր, մեծ խուց մ'էր, փոքրիկ պարտէզին վրայ նայող երկու պատուհաններէ լոյս կ'առնուր, և հնաւուրց որթատունկի ոստերով այնքան պաշարեալ որ ամենաթեթեւ հովին տերեւները և դեռաբողբոջ ճիւղերը քերելով կը զարնուէին փոքրիկ լուսանցոյց ապակիներուն: Կարծես թէ ներս կ'ուզէին մտնել: Գետնին տախտակամածը մթնորակ և հնութենէն փայլուն շաղանակէնոյ տաղձներէ կաղնուած էր. առաստաղին գերանները՝ մի և նոյն գոյնով և մի և նոյն փայտէ էին: Խուցին մէկ անկիւնը կը գտնուէր հին կաղնիի ծառէ շինուած անկողին մը ամպհովանիով՝ մթնադոյն բրդեղինօք զարդարեալ, ծոպերով և կապուտակ ժապակիօք. ուրիշ անկիւն մը՝ կղպակը կոտրած մեծ սնտուկ մը, սեղանատախտակ մը և քանի մը հաստատուն կաղնուածքով աթոռներ: ահաւասիկ բոլոր կահկարասիքը: Հին հայելի մը ձոխաքանդակ չրջանակով որուն վրայէն ոսկեզօծութիւնը անհետ եղած էր՝ վառարանին վերի կողմը կը զարդարէր: Այդ խուցին տեսքը ինձ հաճոյ երեւցաւ. ոչինչ կրնար արգելք ըլլալ իմ լուրջ խորհրդածութեանցս: Գիշեր. բարի, ըսի պառաւ Մարի Աննային, բայց քունս բնաւ չտարաւ. ցուրտ խոնաւութիւն մը ոսկորներուս մէջ կը թափանցէր՝ շատոնցունէ ի վեր անքնակ այս ընդարձակ սենեկին մէջ. խուցին ահագին մեծութիւնը, գիշերուան ստուերներէն առանձնութեանս զգացումն ա՛յլ աւելի ընդարձակուելով՝ սարսափ կ'աղ-

դէր սրտիս: Սաստիկ հով մը ելեր էր և լայնանիստ վառարանէն ներս խռթելով մինչեւ խակ անկողնիս թանձր վարագոյրները կը շարժէր. խուլ մունչլունը դաշտաց ամայութեան վրայէն անցնելով՝ ինձ տարտու կ'աղղէր. այնպէս կը թուէր ինձ որ մէկը կար և իմ շուրջս կուլար: Վերջապէս առաւօտ եղաւ, նախորդ օրուան պէս տխուր և անձրեւոտ օր մը, պատուհանը վազեցի: Որթի տերեւներուն մէջէն փոքրիկ պարտէզը տեսայ և ցանկապատ սարահարթ դաշտադետինները, կէս տերեւաթափ դունատ վարդեր, վախտ տաշկիաներ և քանի մը ծառատունկք իրենց անհլակ ճիւղերը նեղ տրահետներուն մէջ ընդ բարձ ածէին. ահաւասիկ առաջին նայուածքով աչքիս հանդիպածը: Սը կողմը մեր երէկուան անցած լայնատարած դաշտերը, ձախ կողմը և մինչեւ ի ստոր անձրեւներէ բարձրացած դետին եղերքը հասնող թանճրախիտ չազանակէնեաց անտառը բլրին լանջակողման վրայ տնկուած: Հեռուն՝ միգամած հորիզոնը երկրին տեսքը կը ծածկէր. նորէն անկողին մտայ և հոն նստայ տխուր ու մրտախոհ՝ մինչեւ որ Մարի Աննան սենեակս մտաւ:

Անձրեւը կը շարունակէր. փոքրեցի դուրս ելնել, բայց տիղմէն և միւռչէն վնասած ետ դարձայ: Քանի մը գիրք հետս առեր էի, ուղեցի կարդալ, բայց միտքս չկրցի ամփոփել և գիրքը ձեռքէս սահեցաւ: Ապագային անստուգութիւնը սիրտս կը ճնշէր. ապրելու միջոց չունէի, անպատճառ պէտք էր ծարել, որովհետեւ աւելի կ'ուզէի մեռնիլ՝ քան հօրեղբօրս դիմել:

Սակայն իմ անցեալս բոլորովին ամենէն ծածկելու որոշ դիտաւորութիւնս՝ ինձ խապառ կ'արգելուր ձեռք բերել մտածելու այդ ամեն վիճակ և պաշտօն, որ գիտութեան հետ միանգամայն կը պահանջէն ամենայն կերպով փտահութիւն ազդող եւ անձնական պատուաւորութեան նկատմամբ պէտք եղած յանձնարարութիւններն ունեցող հանդամանքներ. հետեւաբար ասդնեգործ աշխատութենէ զատ՝ ուրիշ բան չէր մնար ինձ. արիութիւն չէր պակսեր ինձ, բայց երբ երեկոյին ինքզինքս կը գտնէի ընդարձակ խուցիս մէջ՝ աղօտ լուսով մը տկար կերպով լուսաւորեալ, և շուրջս ակնարկ մը

նետեւելով ինքզինքս զգացի լքեալ ու բարձր թողի ամեն իմ սիրած անձերէս, երբ մտածեցի որ այս առանձնութիւնս մշտապէս պիտի ըլլար, անբացատրելի վշտութեան մէջ ինկայ: Դուրսը ամենայն ինչ խաւար և խառնաշփոթ, ծովային քաղաքի ամայի խողան դաշտին վրայէն անցնելով սուր ձայնիւ և անախորժ հնչմամբ կուգար տան անկեանց բախելու. անձրեւը որ բոլոր օրը չէր դադրեր, այդ միջոցին տեղատարափ կ'իջնէր: Ընդարձակ վառարանին մէկ անկիւնը կծկաած նստեր էի, և աջօքս կը դիտէի մուխը որ ոլորտապտոյտ բարձրանալով թէեւ մերթ ընդ մերթ յետս կը մղուէր դուրսի հովին սաստկութենէն, բայց դարձեալ ամպի նման միշտ կ'եղնէր ու կ'եղնէր:

Մարի Աննա շատոնց կը քնանար անշուշտ, որովհետեւ առանց անդրադառնալու բաւական ժամանակ անցուցեր էի, երբ կարծես թէ դուրսի օդին դուրսն դռնէն նին միացած թեթեւ շնկոց մը լսեցի: Ականջ դրի, շուրջ աւելցաւ. կարծես թէ պատուհանիս տակ թեթեւ ոտնաձայն մը կը լսուէր. ո՞վ կրնար ըլլալ այս ահաւոր գիշերուան մէջ. դիւղացի մը անշուշտ, գէշ ճանքաներու մէջ ուշ մնացած և միջին գէտ անպատասխար. վանդակալեղիկն մտնոցայ և կը ջանայի աջօքս խորասուզել ահաւոր խաւարին ծոցը: Այդ միջոցին դետնայարկի փեղկերէն մէկուն որոշ բախելու ձայն մը լսեցի. գիտէի որ Մարի Աննա խոհանոցէն դուրս կը պառկէր, ուր չէր կրնար լսել այդ ձայնը. պատուհանը բացի և դուրս կախուեցայ. անձրեւի տեղատարափ և սառնորակ հոսանք մը երեսիս զարնելով կարծես աչքս կուրցուց և հովը դէպ ի ներս մտնելով լոյսը մարեց: Երբ կը ջանայի դայն նորէն արժարձելու՝ տան երեսը ծածկող որթատունկը ուժգնապէս ցնցուեցաւ: Լսեցի տերեւոց խշխն և ոտոց քշտելու ձայն մը, և ահաբեկ դէպ ի կրտսրաց պատուհանը աշուրներս դարձուցած ժամանակ մարդ մը յանդգնաբար անկից ներս մտաւ և դէմս կայնեցաւ: Ճիշ մ'արձակեցի և ծուներ իջնելով ձեռուներս իրեն կարկառեցի, վստան դի ճանցեր էի զինքը իւր դիտախալ մտղերուն ներքեւ և երեսէն վար վազող առուակոտան անձրեւին մէջէն: Պատուհանը փակեց և բաղկացը մէջ առնելով զիս կրակին մօտ տարաւ:

(Շարունակելէ)
ԲՕԼ ԱՆՊԱՆ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

22-28 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ս Ր Տ Ա Ք Ի Ն

Իբր վեց ամսոյ ընթացքէ մը յետոյ, Կորտոն զօրավարն սկսած է տեղեկութիւններ տալ Խարդումէ: Թայմը իւր վերջին թուով հրատարակած է երկու հեռագրեր իւր Խարդումի թղթակցէ, որ Կորտոն զօրավարի քով կը գտնուի: Թայմը ապրիլ 25/17ին հրատարակած էր վերջին հեռագիրը Խարդումէ. անկէ ի վեր Խարդում պաշարուած լինելով, կարելի չէր եղած ո՛ր և է ուղղակի լուր ստանալ: Այժմ Թայմի մէջ հրատարակեալ հեռագիրը Քատալայի և Մասովայի ճամբով Սուաբիի զրկուած և անտի հեռագրուած են Անգլիա: Այս հեռագրոց առաջնոյն թուականն է ապրիլ 28 և վերջնոյն՝ յուլիս 31: Կը պատմեն՝ սոյն միջոցին զԽարդում պաշարող Մէհաի մարդոց հետ թէ՛ ցամաքի և թէ՛ Նեղոսի վրայ տեղի ունեցած կռիւներն, և այն ջանքեր զորս Կորտոն զօրավարն ըրաւ մի կողմէ Խարդում քաղաքը պաշտպանելու և միւս կողմէ քաղաքին բնակիչները սովորաբար կորնչելէ ազատելու համար: Թայմի այս հեռագրերէն կերելի թէ սուրբ են վերջին շարաթնորու մէջ առնուած մասնաւոր տեղեկութիւնք որք կը ծանուցանէին Խարդումի պաշարման բարձումը: Բայց և այնպէս, Պ. Կլատտոնի նախարարութիւնը կը զգայ թէ երկրին առջեւ մեծապէս պատասխանատու պիտի մընայ, եթէ բնաւ օգնութիւն չըկած չլինի Խարդումի քաջ պաշտպանին: Հետեւապէս Լորտ Ուոլլի և անոր զօրախումբն սկսած են Նեղոսն ի վեր երթալ: Ըստ վերջին հեռագրոց Լորտ Ուոլլի հասած է Ասուան:

Կորտոն զօրավարին ողջ առողջ և Խարդումի տպահով կացութեան մէջ լինելուն լուրերը մեծ գոհութիւն պատճառեցին Անգլիոյ մէջ: Լոնտոնի մեծ լրագիրք, տեսնելով թէ Կորտոն զօրավարէն լուր չի դար, և միւս կողմէ այս տարօրինակ մարդու վրայօք բաներ կարգալու մասին հանրութեան փափագէն մղեալ, անոր անցեալն սկսած էին պրպտել: Կորտոն փաշայի այս հին յիշա-

տակներէ կը տեղեկանանք թէ նա Խորհուրդ տաւերազմին մէջ իսկ կարեւոր դեր մը կատարած էր, թէ և լինէր երիտասարդ ենթաստայ մը, և հաշուութեան կնքումէն յետոյ, նախ Թուրքահայաստան և ապա Ռուսահայաստան զրկուած է սահմանները դժող յանձնախմբին իրրեւ անգլիական պատուիրակ: Կորտոն այն ժամանակ դեռ 26-27 տարեկան էր: Արարատ լեռան վրայ ելած է, թէ և ո՛չ մինչեւ դադարձը. բայց Արազած լեռան մինչեւ գաղաթն ելած է, առաջնորդութեամբ՝ Քուրդ ուղեցոյցներու: Կորտոն իւր թղթակցութեանց մէջ, որք հրատարակուած են, կը խօսի Հայաստանի դիրքերուն, բնակչաց և ցեղերուն վրայ, մանաւանդ երկրին Պաթումէ մինչեւ Արարատ լեռը տարածեալ մասին վրայ:

— Փանի որ Անգլիան ազատող զօրախումբը Նեղոսն ի վեր կերթայ, զՍուտան պարպելու խնդիրն օրական կարեւորութիւն կը ստանայ նորէն, և այս ձեռնարկութեան ահագին դժուարութիւններն յերեւան կուգան նորէն: Ալեքսանդրիայէ սեպտ. 30 թուով կը հեռագրուի առ Թայմը. «Մասու վայէ առնուած նամակ մը կը զեկուցանէ թէ Փատալայի բնակիչք չեն ուզեր քաղաքէն ելնել և Եգիպտոս դալ, եթէ իրենց բոլոր ստացուածքը փոխադրելու միջոցներ չհայթայթուին: Կը հաշուի թէ առ այս հարկաւոր են 30 հազար ուղտեր: Կառավարիչը միայն 3 հազար ուղտ կրնայ ձարել, և դիտել կուտայ որ եթէ այս կարաւան զօրքերով չպաշտպանուի, կրնայ կողոպտուիլ աւաղակներէն, որք կը վիստան ձամբուն վըրայ: Սորա մեծ մասամբ Պաշը-պօզուքներ են, զորս կառավարութիւնն արձակած էր պաշտօնէն»:

— Խորապիտոյ Նահանգային ժողովոյ նոր ընտրութիւնք վերջացան, և թէ՛ կառավարական կուսակցութիւնն և թէ՛ Սղարսէիչի արմատական ընդդիմադիր կուսակցութիւնը նոր ոյժեր ստացան: Ժողովը սեպտ. 30ին բացուեցաւ յԱլիսամ, Ֆրանձ Եօղէֆ կայսեր նամակով, որ կ'ըսէ թէ Ն. Կ. վեհափառութիւն, ի նիստ հրաւիրելով ժողովն, հետեւեցաւ իւր հայրական սրտին բաղձանաց, որով կուգէր իւր հաւատարիմ Խորապիտոյ առիթ մը տալ սահմանադրութեան համաձայն աջակցելու հանրային գործոց վարչու-

թեան: Հունգարիայ հետ միացմամբ Խորապիտոյ կը վայելէ ինքնօրինութիւն, և երաշխաւորութիւն մ'ունի այդ ինքնօրինութեան պահպանման համար: — Կը կարծուի թէ աւստրիական կառավարութիւնը տրամադիր է գիջումներ ընել Խորապիտոյ, եթէ Նահանգային ժողովը զրկէ իւր երեսփոխաններ Բէշպայի Հունգարական Խորհրդարանին:

— Պուլկարիոյ եւ Արեւելեան-Րումէլիի կառավարութեանց միջեւ բանակցութիւնք կը շարունակին մաքսային նոր պայմանագրոյ մը կնքման համար:

— Պերլինի մէջ հաստատուպէս զրոյց մը կայ թէ մեծ տէրութեանց միջեւ բանակցութիւնք տեղի կունենան՝ Եգիպտոսի եւ մասկան խնդրոյն կարգադրման համար Լոնտոնի դեսպանախորհրդոյն նիստերը վերսկսուելու նպատակաւ: Գերմանիա յայնժամ և եթ պիտի հաւանի եղեր այսմ, երբ անհաւանական երեւի դեսպանախորհրդոյ խորհրդակցութեանց երկրորդ անգամ անյաջողութիւնը:

— Ալեքսանդրիայէն կը հեռագրեն առ թայմը թէ անգլիական Բարձր Գովիսէր Լորտ Նորթպրուք Եգիպտոսի մէջ ունեցած պաշտօնը պիտի վերջացնէ և երկրէն պիտի մեկնի հաւանօրէն հոկտեմբեր ամսոյ վերջը: Լորտ Նորթպրուք վերջերս Էլ-Պէլէտի բոլոր Շէյխերը կանչելով, անոնց կարծիքն հարցուց Եգիպտոսի դաւառային վարչութեան վերաբերեալ զանազան խնդրոց վըրայ: Գրեթէ բոլոր Շէյխերը պատասխանեցին թէ Միսրէները (գաւառական կառավարիչները) երկրին մէջ բարեկարգութեան պահպանման պատասխանատու պարտին լինիլ և չընդունեցին որ անգլիացի ոստիկանութեան պաշտօնեայք կարենան անկախօրէն գործել, առանց հրահանգ ստանալու Միսրէներէն:

— Անգլիական լրագիրք կը ծանուցանեն թէ Խորհրդարանին վերաբացման օրն իսկ Հայտ-Բարբի մէջ մեծ Ֆէթիկ մը պիտի դումարի, Լորտերու ժողովոյն ջնջումը պահանջելու համար:

— Աւստիկ Ֆրանքօ-չինական պատերազմին նկատմամբ Շանհայիէ առնուած հեռագրական նորագոյն տեղեկութիւնք: Չինական կանոնաւոր զօրքեր հոկտ. 3ին յարձակեցան Փրանսական երեք թնդանօթակիր

չողենաւուց վրայ, որք Լօշ — Նան գետն ի վեր կենէին: Ֆրանսացիք մէկ մեռեալ և 30 վիրաւորեալ ունեցան: Ֆրանսական այս երեք թնդանօթակիր չողենաւուց կռիւը վայելուն յաղթութիւն մ'եղաւ 4,000 չինացւոց դէմ, զորս Ֆրանսացիք յետոյ կը մղեն:

Չինացիք մեծ կորուստներ ունեցան:

Գուրպէ ծովակալն հոկտ. 1ին Քէլունկի վրայ յարձակեցաւ. հոկտ. 2ին գրաւեց Քէլունկի բերդերը զորս Չինացիք թողած էին բուռն դիմադրութենէ մը յետոյ: Այս գործողութեան մէջ Ֆրանսացիք 4 մեռեալ և 13 վիրաւորեալ ունեցան, իսկ Չինացիք 100 մեռեալ և 300 վիրաւորեալ:

Գուրպէ ծովակալն հոկտ. 3ին նոր դիրքեր գրաւեց Քէլունկի շուրջն, առանց ընդդիմութեան պատահելու և սկսաւ ամրացնել այդ զանազան դիրքերն, այնուհետև աւելի յառաջ խաղալու համար:

Փոխ — ծովակալ Լէսրէս հոկտեմբ. 2ին Թամսիւի (Քէլունկի արեւմտակողմը) վրայ յարձակեցաւ եւ չինական հրետանիները քանդեց: Հոկտ. 4ին գրաւեց զԹամսիւի, զոր ամրացուց և սկսաւ Ֆրանսական զօրք հաստատել: Իսկ հոկտ. 3ին պաշտպանողական դիրքի մէջ դնելէ յետոյ զԹամսիւի, յառաջ խաղաց Քէլունկի վրայ՝ Գուրպէ ծովակալին հետ միանալու:

— Բէքինէն հոկտ. 6 թուով կը հեռագրեն առ Թայպիլ թէ Չինաստան որոշեր է ընդունիլ իրաւարարութիւն մը և անոր հետեւանքները:

— Գուրբան կիսով չափ նուազած է իստալիոյ մէջ, իսկ մարսիլիոյ և թուլոնի մէջ, ուր արդէն զգալի կերպիւ նուազած էր, երկու շաբաթէ հետէ գրեթէ նոյն աստիճանի վրայ կը մնայ: Աւասիկ վերջին աւուրց քուրքայի դէպքերու վիճակագիրն.

Իտալիա. — Հոկտ. 3ին 50 հոգի մեռան քէլերայէն ի Նաբոլի, 25 հոգի ի Ճենովա, և 95 հոգի զանազան տեղեր. ընդ ամենն 170 հոգի: Հոկտ. 4ին 28 հոգի մեռան ի Նաբոլի, 28 հոգի ի Ճենովա, և 93 հոգի զանազան տեղեր. ընդ ամենն 149 հոգի: Հոկտ. 6ին 58 հոգի ի Նաբոլի, 32 հոգի ի Ճենովա, և 149 հոգի զանազան տեղեր. ընդ ամենն 239 հոգի: Հոկտ. 7ին 27 հոգի ի Նաբոլի, 13 հոգի ի Ճենովա, և 71 հոգի զանազան տեղեր. ընդ ամենն 113 հոգի:

Ֆրանսա. — Հոկտ. 3ին 2 հոգի մեռան քուրքայէն ի Մարսիլիա. հոկտ. 6ին 8 հոգի, և հոկտ. 7ին 2 հոգի:

Ճէզայիրի մէջ եւս քուրքա ծագած է: Թունուզի առողջապահական Խորհուրդը քարանձինայի ենթարկեց Պօնէն եւ Օրանէն եկող նաւերը: Հոկտ. 3ին 10 հոգի մեռան քուրքայէ յՕրան և 1 հոգի ի Պօն: Հոկտ. 6ին 7 հոգի յՕրան: Հոկտ. 7ին 7 հոգի յԱլժէ:

— Յունաստանի թագաւորն և թագուհին հոկտ. 3ին իրենց յԵւրոպա ուղեւորութենէն վերադարձան, բայց Աթէնքի ստիւն, մաքրանոցին մէջ քարանձինս կըսպասեն:

— Միացեալ — Նահանգաց մէկ ծայրէն միւսը տարօրինակ յուզում մը կը տիրէ այս պահուս, նախագահական առաջիկայ ընտրութեան առթիւ: Պ. Պ. Պէյն եւ Լոկան՝ Հանրապետականաց ընտրելիներն, և Քլիֆլէնտ ու Հէնտրիքս՝ Ռատկաւարականաց ընտրելիները կը չորին Միացեալ — Նահանգաց քաղաքները՝ ժողովրդեան ուշադրութիւնը գրաւելու և քուէներ վաստկելու համար, ամենուրեք ճառախօսութիւններ ընելով:

— Ռուսական Կապիտալ պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ Կովկասեան բանակը Թիֆլիզի շուրջն համախմբուեր է, ի մտոյ տեղի ունենալիք գինուորական կըրթութեանց համար, որք պիտի կատարուին Հայազգի զօրավար Յակոբ Ալխաղօֆի հրամանատարութեամբ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Յունաց պատրիարքական ընտրողական Ժողովն երկու նիստ ըրաւ անցեալ շաբաթէն ի վեր: Առաջին նստին մէջ, որ տեղի ունեցաւ ուրբաթ օրն, ի Ֆէնէր, կարդացուելով՝ ոճրագործութեամբ ամբաստանեալ քահանայից, ճգնաւորաց և ճգնաւորուհեաց դատաւարութեան վերաբերեալ կառավարական Թէզքէրէն և տեսնուելով որ այսու վերջացած է Եկեղեցական Առանձնաշնորհմանց խնդիրն եւ իրաց նախկին վիճակն հաստատուած, Ժողովն սոնցաւ պատրիարքական ընտրելեաց ցանկի պատրաստութեան: Գաւառներէն հասած քուէթուղթերը բացաւ, քուէհամարը կատարեց եւ

որոշեց ըստ օրինի Բ. Դրան հաղորդել արդիւնքն : Ընտրելեաց ցանկին մէջ գտնուելով նախկին Պատրիարք Տ. Յովակիմ Գ. ի առնուն, Հէրակլէի Մետրապոլիտն առաջարկեց ջնջել զայն, ամբաստանութեան ներքեւ նկատելով Ն. Որբազնութիւնը : Այս առաջարկ բռնուն և աղմկալից վիճարանութեանց տեղի տուաւ, և նոյն օրը կարելի չլինելով որոշման մը յանգիլ, շարունակութիւնը թողուեցաւ յաջորդ նստին :

Այս չորեքշաբթի ընտրողական ժողովը դարձեալ գումարուելով, պատրիարքական տեղապահ Տ. Ագաթանգեղոս ժողովոյ հաղորդեց Տ. Յովակիմ Գ. ի մի նամակն՝ որով պատրիարքական ընտրելիութենէ կը հրաժարէր : Այս հրաժարական 5 քուէի դէմ միաձայնութեամբ ընդունուեցաւ : Հետեւաբար սոյն միջադէպը փակուած նկատուելով, ժողովը ընց առանձնաշնորհմանց խնդրոյն կարգադրման համար առ Օգոստ. Սուլթանն մատուցանելի ուղղործն, որ պատրաստուած էր յատուկ յանձնաժողովոյ մը կողմէ, և ընդունեց զայն :

Ապա ստորագրուելով պատրիարքական ընտրելեաց ցանկն և ի միասին խմբագրեալ թագրիւն, յանձնուեցաւ Գարու-Քէհեասի Սգալրաքի էֆէնտիի, որ նոյն օրն իսկ տալաւ յանձնեց զայն Բ. Դուռը գումարեալ նախարարաց Խորհուրդին :

— Արդէն չաբաթ մ'է որ մայրաքաղաքս եկած են Բարիզի Օսմանեան Պանքային ներկայացուցիչ Պ. Պէրժէ, Լոնտոնի դրամատեարց ներկայացուցիչ Պ. Ուաթէրֆիլտ եւ Վիէնայի « Բրէտի Անչլալտ » պանքայի տնօրէն Պ. Զիֆֆէր, Օսմ. Բէժիի գործոց վրայ քննութիւն բանալու բանալու համար : Այս դրամատեարք մի քանի անգամներ ի ժողով գումարեցան Օսմ. Պանքայի տնօրէն Պ. Տըվօի հետ և ի'նչ ի'նչ կարեւոր խորհրդակցութիւններ ունեցան : Կըսուի թէ ի մօտոյ Սամսոնի, Տրապիզոնի, Իզմիրի եւ Պրուսայի կողմերն ուղեւորութիւն մը պիտի ընեն, ի մօտոյ տեսնելու համար իրաց վիճակն :

— Օսմանեան Պանքան չաբթուս երկու անգամ մէկ մէկ միլիոն զրուշի մէճիալիյէ յանձնեց կայսերական Փողերանոցին, մանր դրամի վերածելու համար :

— Բէժիի գործոց քննութեան համար Եւ-

րոպայէն եկող պատուիրակաց մէջ կը գըտնուի մեր ազգայիններէն Մեծ : Նազարէթ էֆէնտի Սլահվէրտի, որ Պ. Պէրժէի քարտուղարն է :

— Թայմիլի Կ. Պոլսոյ թղթակից Պ. Մաքէնզի Ուալէյս Անգլիա գնաց և կըսուի թէ երկար ժամանակ չպիտի վերադառնայ :

— Ազգայութի խմբագիրներէն Պ. Բօլ Պէնտալի Գարի տնօրէն Պ. Քիրեաքօրուօի դէմ բացած սլաուոյ դատը տեսնուեցաւ այս երեքշաբթի, հելլենական հիւպատոսարանին առջեւ և Պ. Քիրեաքօրուօ 200 Փըրանք տուգանաց դատաւարտեցաւ :

— Շաբթուս մէջ յանդուգն աւաղակութեան մը լուրն հասաւ մայրաքաղաքս : Կեսարիայէն եկող օսմանեան ցամաքային թըղթատարն, Կէյնիքի և Նիկոսիոյի մէջտեղն աւաղակաց ձեռքն ինկեր է : Թղթատարական սլաուականց մէջ բաւական կարեւոր գումարներ և պաշտօնական դրեր կան եղեր կառավարութեան ուղղեալ : Յարձակման մանրամասնութիւնք յայտնի չեն տակաւին, բայց կ'երեւի թէ թղթատարն առաջնորդութարք և ոստիկանք քաջութեամբ պաշտպաններ են զայն, վասն զի լուր հասած է թէ ոստիկան մը սպանուած է և թաթար մը ու քանի մը ձի վիրաւորուած են : Բռնուն կոխէ մը յետոյ, աւաղակք յաջողեր են թղթատարական սլաուականները, ներփակեալ դրամաճրարներով և դրերով յափըտակել և խոյս տալ : Օգոստ. Սուլթանն այս յանդուգն յարձակման լուրն ստանալուն, ազդու հրամաններ տուած է աւաղակաց ձերբակալման համար : Սլիմլիյէի զօրանոցէն 2 գունդ հեծեալգօրք սպառազինուեր ու պատրաստուեր են : Միանգամայն հրաման զրկուեր է Հայտար փաշայի երկաթուղւոյ տնօրինութեան որպէս զի փութով յատուկ կառախուսի մը ձամբայ ելնէ, հեծեալգօրաց փոխադրութեան համար : Յիշեալ տնօրինութիւնն հարկ եղած միջոցները ձեռք առնելով, փոխադրեր է ամբողջ հեծեալգօրաց խումբերն, այն է 500 մարդ, 318 ձի, դէնք և պաշար : Հետեւաւաղօրք ժամանակին Նիկոմիդիա հասեր են և կըսուի թէ յաջողեր են պաշարել այդ աւաղակներն որք մայրաքաղաքէս քիչ հեռու տեղ մը յանդուգնած են այս տեսակ յարձակում մ'ընել :

Ըստ Թարիգի՝ այս յարձակման ժամանակ ոստիկան մը, և կարաւանին առաջնորդաց մէկն սպաննուեր, և առաջին սուրահանդակն (Թաթար աղասը) վիրաւորուեր են, և թէ սպայուսակաց մէջ գտնուած դըրամն 280 հազար դրէ է, զոր աւազակը յափըշտակեր փախեր են :

— Գոհութեամբ կը լսեմք, թէ կըսէ թէրճէմանը — Հագիգաթ, կայսերական անձնական դանձուն իմաստուն նախարար Վըսեմափայլ Յակոբ փաշայի բարեք կարգադրութեան շնորհիւ, Թօփհանէի շինութեանց վերատեսուչ Սէյիտ փաշայի միջոցաւ կայսերական պալատան փայտի պիտոյից համար սղոցի գործարան մը շինուեր և 5 հատ մեծ սղոցներ զետեղուեր են ի նմա : Յիշեալ գործարանը նախընթաց օրը բացուելով՝ առաջին փորձն եղեր և երկու ժամու մէջ 200 չէֆ փայտ կտրուեր է :

— Ներքին գործոց նախարար Բարձր Էտհէմ փաշա հեռագիր մ'ուղղելով Հաճնոյ, Ջէյթուէի և Մարաշի իշխանութեանց, տեղեկութիւն պահանջեր է վերջերս այդ քաղաքաց մէջ պատահած մեծ հրդեհներուն նկատմամբ : Նորին Բարձրութիւնը մանրամասն տեղեկութիւններ խնդրած է թէ քանի տուն այրած է, որքան մարդ վնասուած է հրդեհէն, ի՞նչ օգնութիւն տրուած է ցարդ, ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են կարօտեցող նախնական պիտոյքն հոգալու համար, և թէ մանաւանդ ի՞նչ հարկաւոր է դժբաղդ հրկիզելոց օգնելու համար :

Ա. Չ. Ս. Յ. Ի Ն

Զրոյց կայ թէ Ամեն . Ս. Պատրիարք Հայրն անցեալ շաբթու հրաժարագիր զրկեր է կայսերական պալատը :

— Օգոստ . Սուլթանի բժշկապետ Մալբոսէնի փաշա այս կիրակի Ամեն . Ս. Պատրիարք Հօր տեսութեան գնաց :

— Ղալաթիոյ Թաղական առժամանակեայ յանձնաժողովը մեծաւ փութով կը շարունակէ իւր նիստերը : Որոշեր է՝ ջանալ վճարել հրաժարեալ Թաղական Խորհրդէն մնացած 320 լիւրայի չափ պարտքը, և մինչեւ 1½ — 2 ամիս բանալ Կեդրոնական վարժարանը՝ Ղալաթիոյ յատուկ նախակրթարանի մը համար ալ նիւթական ապահովութիւն հայթայթելով կանխաւ :

— Կրօնական և Քաղաքական Ժողովներն այս շաբթու ուրոյն ուրոյն նիստ ընելով, դրաղեցան գաւառական և ներքին ի՞նչ ի՞նչ կարեւոր խնդիրներով :

— Կարնոյ Առաջնորդ Գեր . Տ. Մաղաքիա Մ. վարդապետ Օրմանեան՝ այս երեքշաբթի ուղեւորեցաւ ի պաշտօնատեղին :

— Կրօնական Ժողովն Տիարալէքիի Կրօնական Ժողովը գրեթէ իմանալով, որ հրաշագործ Տիգրանեան Սրբազան՝ կրօնական զեղծմանց մէջ կը գտնուի և հակառակ օրինաց եկեցեցւոյ տնօրինութիւններ ըրած է, որոշեց գրել առ Տիգրանեան, որ փութայ իւր պաշտօնատեղին՝ Մակարայեցւոց վանքէն . որոշեց գրել և առ Կրօնական Ժողովն Տիարալէքիի, որ չեղեալ համարի Տիգրանեանի տնօրինութիւններն :

— Կիլիկիոյ կաթողիկոս Տ. Մկրտիչ Սըրբազան Մարաշէն սեպտեմբ . 23 թուով հետեւեալ հեռագիրն ուղղած է առ Ազգային Պատրիարքարանն . — « Նարկիզի պատկի խնդրոյն առթիւ ձեր առած տեղեկութիւնները սխալ են, ինչպէս հաստատուած է աղջկան մատուցած խնդրագրէն » — Կրօնական Ժողովը սոյն հեռագիրն հաղորդեց ազգային լրագրաց և պտտած դատեց գոհունակութեան գիր գրել առ յիշեալ Կաթողիկոսն, միանգամայն խնդրոյն մանրամասնութիւններն ուղեւոր համար Ն . Սըրբազնութեանն : Իսկ Վըրդեաշարեան Աղա սեպտեմբ . 23 թուով հետեւեալ հեռագիրն ուղղած է Արեւելքի խմբագրութեան . — « Կը կրկնեմ սեպտեմբեր 15 թիւ հեռագիրս : Յուսահատութեամբ կը տեսնեմ որ « ցարդ Կ . Պոլիս զրկած հեռագրերս եւ « յանուն արդարութեան ըրած պահանջ « ջուհներս արդիւնք մը չունեցան :

« Ծանուցեալ լռնաւորք կրնան աղջկանս « կեանքը դաւաճանելու չափ յառաջ երթալ « իրենց բռնութեանց և ճնշմանց մէջ, այն « պէս որ վտանգէ զերծ չկրնար համարուիլ « մինչեւ իսկ եթէ աղջիկս յանձնեն, մեր « տուն ի Հաճըն : Հետեւապէս յանուն ար « դարութեան կը խնդրեմ որ աղջիկս Ա. « տանա բերուի և տեղւոյս Առաջնորդին « ձեռամբ ապահով տեղ մը դրուի » :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԷ ԼՐԱԳՐՈՅ

Ա. Զ. Դ.

Մասիսի ընթերցողներէն շատեր խնդրած ըլլալով որ՝ թերթառ թերթ հրատարակեալ ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ վիպասանութեան առաջին հատորներն եւս տպուին, կը ծանուցուի թէ սոյն հրատարակութիւնը տեղի պիտի ունենայ և մեր ընթերցողք պիտի կտրենան ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ վիպասանութիւնն ամբողջապէս ունենալ:

ԿԱՐԵՒՈՐ Ա. Զ. Դ.

ԳՐԱՅԵՆՆԵԱԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷԹ. ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

Գործակէց:

ՌԱՀԻՄ ԷՖ. Մահմետական օրէնսգէտ.
Յ. ՇԱՀՆԱԶԱՐ ԷՖ. Փարիզու ճեմարանէն:

Ն. Պ. ՊՕՅԱՃԵԱՆ ԷՖ. Օսմանեան իրաւագէտ Ա. Կարգի:

Այս գրասենեկին յարաբերութիւնը օր ըստ օրէ ընդարձակուելով հարկադրեցին տալ անոր վերոյիշեալ կազմակերպութիւնը: Նոր գործակիցներու աջակցութեամբ այսուհետեւ պիտի ըստանան իրենց լուծումն աւելի փութով և խնամօք:

Գրասենեակ, Կալաթա, Մէհմէտ Ալի փաշա խան, թիւ 5:

ԿԱՐԵՒՈՐ Ա. Զ. Դ.

Ա. ԳՐԱՅԵՆՆԵԱԿ

ԳՐԱՅԵՆՆԵԱԿ

ՄԵՏԱՂԵԱՅ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՏՈՒՓԵՐՈՒ

մասնաւորապէս Ծխախոտի համար

ԲԱՐՈՒՆԱԿ ԲՈԼԱՏԵԱՆ

Մենաշնորհեալ յՕսմ. Կառավարութենէ

ՇԱՏ ԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ, թիթեղեայ տուփեր մասնաւորապէս ծխախոտի համար:

Գործին գեղեցկութեան, դիմացկունութեան և այլ ամենայն տեղեկութեանց համար գիմել առ

Խ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Ղալաթի, Մահմետէ փող 38

Պոլս, Ենի-ճաֆ, Չեմէկէրէ փող 51

Գաւառներէ ուղղակի յանձնարարութիւնը փութով կը կատարուին:

Ա. Զ. Դ.

Մայրաքաղաքիս հայ փաստաբաններէն Նազարէթ Էֆէնտի Խաչէրեան ընկերակցած է Յովհաննէս Էֆէնտի Կիւլպէնկեանի, որ Ֆրանսայի Էքս-քաղաքի իրաւաբանական համալսարանի մէջ իւր ուսմունքը փայլուն յաջողութեամբ աւարտած և Լիւսաքի անորոշ վկայագիրն ստանալով այս անգամ վերադարձած է:

Խաչէրեան Էֆէնտի որ Պրիւսէի համալսարանէն վկայեալ է, և Տէֆէրէ և Տրուսի տիրոջն ունի, արդէն ծանօթ է մեզ՝ դատական աշխարհի մէջ ունեցած համբաւով, և Կ. Պոլսոյ իրաւաբանական վարժարանին մէջ պատժական օրինաց դասախօսութեամբը:

Գոհ պիտի լինին ամեն անոնք, որք պիտի գիմել յիշեալ Էֆէնտիներու գրասենեակն՝ որ կը գտնուի Ղալաթիա, Գալաֆեան խան, թիւ 9:

ՀՆԴԵԻՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՈՒ

Գ Ր Ե Յ

ՍԵՐՈՎԱԲԷ Վ. ՏԵՐՎԱՇԵԱՆ

Սոյն կարեւոր մատեան՝ որ միջին դիրքով հատոր մ'է, 206 երեսէ բաղկացեալ, գիտական լուրջ աշխատութիւն մ'է, ազգային բանասիրաց և լեզուագիտաց ուշադրութեան արժանի: Գին 15 դրուշ:

Կեդրոնատեղին է Պոլիս, Մահմուտ փաշա, թիւ 259, Գ. Զինձիրճեան էֆէնտիի գրատունը: Կը գտնուի նաեւ Պոլսոյ հայ գրաւթաճառաց խանութները, նաեւ կամուրջին գլուխը Զրաւթաճառ Պողոս աղայի խանութը և Բերա Պ. Վէյսի գրատունը:

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌ

Ի Թահիզ փողոց, աշէն-բէն ճոթ, Բէ- 70

Այս վաճառատուն՝ որ մէկ տարիէ աւելի ժամանակէ հետէ իւր յաճախորդները գոհացնելու ջանք չէ խնայած, կը ծանուցանէ թէ Չինաստանի և Ճապոնի բերքերէն այս անգամ դանդաղ տեսակ ընտիր թէյեր (չայ) բերել տուած է յատկապէս, եւ կը խնդրէ սիրելի ազգայիններէ, մանաւանդ գաւառացի Հայ Ժողովուրդներէ որպէս զի հաճին գէթ միանգամ ի մօտոյ տեսնել իւր ապրանքներն և փորձել թէ՛ տեսակաց լաւութիւնը, եւ թէ՛ գիներու աժանութիւնը:

ԶՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

Կը ծանուցանէ հասարակութեան թէ կարող պիտի լինի մեքենայով ջուր մատակարարել ի Բերմ, ԿԱԼԱԹԱ և ՎՈՒՓՈՐԻ գիւղերը մինչև ԵՆՆԻՄԱՀԱԼԼԷ, 1884 տարւոյ լրանալէն առաջ:

Տեղեկութեանց և բաժանորդագրութեանց գրասենեակները կը գտնուին Բերա Թէքէ-Պաշի փողոց, թիւ 45, և Ղալաթիա Վոյվոտա փողոց, թիւ 14:

Բաժանորդագրութիւնը մէկ տարւոյ համար կը լինին և եռամսէի կը վճարուին:

Կարելի է բաժանորդագրել հետագայ երեք կերպով:

1. — ԿՇՈՒԻ ՎՐԱՅ, որով տանը մէջ ջրամբար մը կամ ծորակ մը կը հաստատուի և 24 ժամը մի անգամ որոշեալ քանակու-

թեամբ ջուր կը տրուի: Օրը 165 օխայ ջրի համար եռամսէին նուազագոյն գինն է 62 1/2 դրուշ ոսկի դրամ:

2. — ՀԱՇԻՈՅ ՎՐԱՅ, տրուած ջուրին քանակութիւնը կը չափուի մասնաւոր գործիքով և իւրաքանչիւր խորանարդ մէդր ջուրի (1000 օխա) համար կը վճարուի 4 դրուշ ոսկի դրամ: Այս գին բարձրագոյնն է. աւելի մեծ քանակութեամբ ջուր սպառող բաժանորդաց համար գիները երթալով կը նուազին: Օրը 165 օխայ ջրի համար եռամսէին նուազագոյն գինն է 62 1/2 դրուշ ոսկի դրամ:

3. — ԸՍՏ ՀԱՃՈՅՍ (այլեայլ մասնաւոր պարագայից մէջ): Այս եղանակ բաժանորդագրութեամբ, տրուած ջուրին քանակութիւնը չհաշուիր, այլ կը չափուի և կը վճարուի տան բնակչաց թուոյն համեմատ: Վեց անձանց համար եռամսէի գինն է 75 դրուշ ոսկի դրամ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՔ

Խողովակները, ջուրին քանակութիւնը չափող գործիքը և ասոնց համար տան մէջ հարկ եղած այլեայլ շինութիւնները բաժանորդին հաշւոյն են:

Եթէ բաժանորդը ուզեն, Ընկերութիւնը կրնայ դիւրութիւններ ընձեռել իրենց վարձու տալով խողովակները կամ չափող գործիքը, և կամ ծախսեց մաս առ մաս վճարումն ընդունելով: Բաց աստի, բաժանորդը անպատ է իւր տան մէջ արդէն գտնուած շինութիւնները գործածել:

Ընկերութեան, ինչպէս նաեւ Թաղապետական շրջանակներու գրասենեակաց մէջ կը գտնուին պայմանագրութեան օրինակներ թուրքերէն, իրաներէն, հայերէն և յուրաքանչէր լեզուաւ:

Բաժանորդ գրուել ուզող անձինք կրնան թղթատարական տոմս մը զրկել առ,

Մ. ԲԷՌԷ

Ընդհանուր գեղարվեստ

Կամ առ Տնօրէնութիւնն, Թէփէ-Պաշի փողոց թիւ 45: